



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գ.Մ. - ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆ



ԳԵՐՄԱՆԻԱՅԻ

Հ Ա Յ

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ



378

Մ-47

06 APR 2010



IV. V

Offe Wfsmeyungge Wehla und 47
Wegm fo lo 1/2 Wfht -

Wegmeyerhuff


A. L. L. L. L. L.

Wegmeyerhuff

Wfht -

370
2050-44

1201. XI 16.



1201

Faint text at the bottom of the page, possibly a library or archival stamp.

378
U-47

ԳԵՈՐԳ ՄԵԼԻՔ-ՆԱՐԵԳԻՅԱՆ

Կ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ ՈՒԹԻՒՆԸ



1004
75307

(Արտատպւած «Տարազ» շաբաթաթերթից)



Թ Ի Ֆ Լ Ի Ս


Ճշարան Կ. Մարտիրոսեանցի. || Типография К. Мартиросянца.
Орбеляновская ул., д. № 1-2.
1901.

54.095

27 JUN 2013

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Дозволено цензурою. Тифлисъ 5 Мая 1901 г.

(Հայաստանի Գրադրական Կենտրոն)

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Գրադրական Կենտրոնի Կառավարություն
1901

ԲԺ. ԲԱԽԻՇ-ԲԷԳ ԱՂԱՍԱՐԵԱՆՑԻՆ

Ն հ է Ր

Յ Ա Ռ Ա Ջ Ա Ւ Ա Ն

Համաձայն «Տեղեկագրի Երոպայի Հայ ուսանողութեան» (1897—1899), որը հրատարակել է այդ ուսանողութիւնը 1899 թւին, Երոպա ուսանող Հայերի թիւը հասնում էր 230-ի¹⁾։ Այդ «Տեղեկագիրը» Հայ ուսանողութեան առաջին փորձն է, և անշուշտ ունի թերութիւններ նաև թւերի մէջ. դա հաստատուեց երկրորդ Տեղեկագրի կազմութեան ժամանակ, երբ գտնուեցան ուսանողներ այնպիսի քաղաքներում, որտեղ դժուար էր գուշակել որևէ Հայ ուսանողի գոյութիւնը։ Բայց բանը ի հարկէ մի քանի աւելորդ տասնեակների մէջ չէ, 230 Հայ ուսանող Երոպայում—դա արդէն բաւականին պատկառելի թիւ է մեզ համար և արժանի է ուշադրութեան, մանաւանդ որ այդ թիւը օրէցօր աճում է։

Հայ հասարակութիւնը յէ կարող չըհետաքրքրել թէ ինչ է ներկայացնում Հայ ուսանողութիւնը Երոպայում։ Ո՞վքեր են կազմում այդ ուսանողութիւնը, որոնք են նրա ձգտումները, ինչ և հրպէս է նա ուսանում, թէ նա արտասահմանից ինչ է բերում հայրենիք, և այլն և այլն։ Բաւական է մտտնանիշ անել, թէ որքան հետաքրքիր է նոյն իսկ միայն վերջին հարցը—ինչ մտաւոր և քարոզական պաշար է բերում Հայ ուսանողը Երոպայից,

¹⁾ Տես այդ «Տեղեկագիրը». էրես 20.

ինչ ազդեցութիւն է գործ գնում նա մեր ազգային հոգեկան զարգացման վրայ, կամ դուցէ այդպիսի ոչ մի ազդեցութիւն գոյութիւն չունի: Նոյն հարցը կարելի է տալ և Ռուսիայում ուսանող հայ ուսանողութեան վերաբերմամբ: Բայց ոչ թէ այս մասնաւոր հարցը, այլ նոյն իսկ մինչև այժմ ուսումնասիրած և պարզած չէ, թէ առհասարակ ինչ ազդեցութիւնների է ենթարկւած մեր հասարակական զարգացումը: Դա մի հարց է, որը պահանջում է լուրջ, երկարատև և բազմակողմանի ուսումնասիրութիւն, որովհետև հայ ազգի ներքին և արտաքին կեանքը, այժմ, ինչպէս և միշտ, ենթարկւած է անբան տարբեր, այնքան նուրբ ազդեցութիւնների, որ շատ դիւրին է նրանցից շատերը աչքից բաց թողնել ու շատ դժար է լուսաբանել նրանց, միմեանց հետ համաձայնեցնել, տալ ամեն մի ազդեցութեանը իր պատշաճ նշանակութիւնը, խառն և յաճախ հակասական շարժումների մէջ գտնել ընդհանուր ճանապարհները, մատնանիշ անել գլխաւոր ղեկավարող գաղափարները և բնորոշել ամբողջ զարգացումը մի որոշ ուղղութեամբ ու որոշ ոգով: Այդ ծանր, բայց շատ շնորհապարտ խնդրի լուծումը թողնենք նրան, ով որ իրան պատրաստուած և հեղինակաւոր է համարում այս գործում: Մեր խնդիրը, մեր ցանկութիւնը, շատ և շատ համեստ է, մենք ցանկանում ենք տալ մի նիւթ, որը վերաբերում է մեր ազգային կեանքի մի մասնաւոր երևոյթի, այն է Գերմանիայի հայ ուսանողութեանը: Մեր ազգային—հասարակական կեանքը պայմանաւորուած է զանազան տարրերով. եկեղեցին, հայկական և ռուսական դպրոցը, հայ և ռուս գրականութիւնը, մամուլը, Ռուսաց և Եւրոպայի զանազան հասարակական ու փիլիսոփայական շարժումները, արտաքին քաղաքական հանգամանքները, Ռուսիայի և Եւրոպայի մեր ուսանող երիտասարդութիւնը, և այլն

և այլն: Այս տարրերից ամեն մէկը ունի իր գրական նիւթերը աւելի կամ նւազ ճոխութեամբ. բայց աչքի ընկնող բացառութիւն է կազմում մեր ուսանողութեան հարցը, և մանաւանդ նրա եւրոպական մասը: Ինձ անձամբ չայտնի չէ ոչ մի աշխատութիւն օրինակ Եւրոպայի հայ ուսանողութեան մասին: Սակայն մեր կրթական շարժումը դէպի Եւրոպան անցել է արդէն անհատական շրջանից դուրս. այժմ հայ երիտասարդները ամենայն տարի արդէն տասնեակներով են անցնում Գերմանիա, Ֆրանսիա, Զւէյցարիա և ուրիշ տեղեր: Հիմա Եւրոպայի հայ ուսանողութիւնը—մի երևոյթ է, որը պէտք է հաշու առնել և որը կարող է զարթեցնել մեր գիտակցութեան մէջ զանազան հարցեր ոչ միայն տեսական, այլ և գործնական, օրինակ, թէ ինչպէս պէտք է վերաբերւենք դէպի այդ աճող շարժումը—այսինքն բարձրագոյն ուսումը ստանալու Եւրոպայում:

Ինքնաճանաչութեան այդ պահանջը ամենից առաջ զգաց ինքը եւրոպական հայ ուսանողութիւնը: Բաւականին մեծ դժւարութիւններով նա տեղեկութիւններ հաւաքեց Եւրոպայում ուսանող հայերի մասին և հրատարատարակեց 1899 մի Տեղեկագիր, որոշելով կրկնել նոյնը ամենայն տարի 2):

Դա մեր ձիակ նիւթն է, եթէ կարելի է նիւթ անւանել նիւթ և բաւականին թերի տեղեկութիւններից բաղկացած մի հաւաքածու. «Տեղեկագիր» թւերով մենք կ'օգտուենք այն ժամանակ, երբ հարկաւոր կըլինի հաստատել որևէ ենթադրութիւն. նախ և առաջ տողերի գլխաւոր

2) Յաւում ենք, որ այդպիսի տեղեկագիր լոյս չըսեսաւ 1900 թ., չընայած որ նրա աւելի բազմակողմանի նիւթերը արդէն հաւաքած էին:

աղբիւրը պիտի կազմեն մեր սեպհական գիտողութիւնները և տպաւորութիւնները, և մեր նպատակն է ոչ միայն տեղեկութիւններ տալ և նրանցից եզրակացութիւններ հանել, այլ և ըստ հնարաւորութեան պարզ պատկեր տալ, թէ ինչ է անում, ինչպէս է ապրում, ինչ է զգում ու մրտաճում Գերմանիայի հայ ուսանողութիւնը: Ամբողջ Սերոպայի հայ ուսանողութիւնից մենք կանգ առնենք գերմանականի վրայ, որ մեզ աւելի լաւ է ծանօթ, քան մընացածները:

I

Շերոպայում, մեր ուսանողութիւնը գտնուում է գրեթէ միայն երեք երկրի մէջ. Գերմանիա, Ֆրիանսիա և Զւէյցարիա ³⁾: Այդ հայ ուսանողութիւնները փոքր ի շատէ տարբերում են միմեանցից իրանց հայեացքներով, աւանդութիւններով և կենցաղավարութեամբ: Սա կարելի է բացատրել ոչ միայն այն հանգամանքով, որ մեր ուսանողները ենթարկւում են զանազան երկիրների մէջ տիրող կեանքի և իդէալների տարբեր ազդեցութեան, այլ և նրանով, որ նրանք գալով հայրենիքի զանազան կողմերից, արդէն բերում են իրանց հետ տարբեր միջավայրերի ազդեցութիւններ:

Ուսանողները գալիս են մեծ մասով Անդրկովկասից, Տաճկահայկական գաւառներից, և վերջապէս, Պոլսից: Առաջին հայեացքից կարելի է կարծել, որ ուսանողի ծննդավայրը, կամ աւելի ճիշտն ասած, իր նախաուսանողական կրթութեան միջավայրը, պիտի ազդեցութիւն չունենար ուսանողական տիպերի տարբերութեան վրայ. օրինակ, եթէ զանազան տեղից

³⁾ Կան ուսանողներ նաև Աւստրիա, Իտալիա, Անգլիա, բայց հատկապէս, ուստի հազիւ թէ այստեղ կարող է խօսք լինել «ուսանողութեան» մասին:

եկող ուսանողները հանդիպում են միմեանց, դիցուք Քերիլինում, դրանով անշուշտ փոխադարձաբար պիտի չեզոքացնէին իրանց նախկին և տարբեր միջավայրերի ազդեցութիւնը այն տիպարների ստեղծագործութեան ժամանակ, որը մենք անւանում ենք Քերմանա-հայ, Փրանսա-հայ, կամ Զւէյցարուս-հայ, այնպէս որ այդ տիպարների զանազանելը պիտի վերագրէր միայն օտար երկիրների տարբեր ազդեցութեանը: Բայց մտածման այս եղանակը սխալ է, և ահա թէ ինչու:

Հայ երիտասարդը դեռ Եւրոպա գալուց սուաջ արդէն կրում է իր վրայ յիշեալ եւրոպական ազգերից մէկն ու մէկի ազդեցութիւնը: Բացառութիւն է կազմում Զւէյցարիան, որը հաւասար ձգողական ոյժ ունի ինչպէս ռուսահայերի, այնպէս և տաճկահայերի համար: Մինչդեռ Քերմանիան քաշում է դէպի իր կողմը ռուսահայերին, Փրանսիան քաշում է տաճկահայերին, այնպէս որ ռուսահայ և տաճկահայ երիտասարդները, ձգտելով եւրոպական բարձրագոյն կրթութեան, ընկնում են—չեմ ասում—հակառակ իրանց կամքի, այլ իրանց համար աննկատելի կերպով այդ երկու հոսանքներից մէկի մէջ: Այդպիսով ուրեմն գերմանական հայ ուսանողութիւնը կազմւած է ընդհանրապէս ռուսահայերից, Փրանսիականը—տաճկահայերից, իսկ զւէյցարականը երկուսից էլ հաւասարաբար:

Հիմա հետաքրքիր է մատնանիշ անել, թէ

ինչպէս մի որ և է յատկութիւն, բերելով հայրենիքից և նոյն ուղղութեամբ զարգանալով օտար երկրում ուժեղանում է և դաւնում աւելի յատկանիշ: Կովկասի հայերը (ի հարկէ ի նկատի ունիմ ինտելիգենտ մասը) կրում են գերմանական գրականութեան, փիլիսոփայութեան և առհասարակ ամբողջ գերմանական ոգու ազդեցութիւնը, մասամբ ուղղակի, բայց գլխաւորապէս ռուս գրականութեան միջոցով: Լրջութիւն, սէր դէպի վերլուծական խորասուզումը, հրապարակախօսութեան և գիտութեան գերադասում գեղարւեստից, ձգտում դէպի զաղափարականութիւնը, հակում զաղափարական անհամաձայնութիւնները մինչև անձնական անհաշտ թրջնամութեան հասցնելու, արտաքին կոպտութիւն, որը յաճախ հաւասարում է անքաղաքավարութեան, ընկերական և ուսանողական իդէալներ, բաւական զարգացած հասարակական բնազդ, և սէր ուսանողական պարապմունքներից, դուրս հանրային հարցերով զբաղելու մանաւանդ խմբովին—սրանք են ռուսահայերի այն յատկութիւնները, որոնցով նրանք բնորոշ կերպով տարբերում են իրանց տաճկահայ եղբայրակիցներից: Ահա և տաճկահայերի յատկութիւնները, որոնք աչքի են ընկնում, երբ մարդ ծանօթանում է նրանց հետ թէ անձամբ, թէ զրականութեան միջոցով:

Տաճկահայերը գերադասում են գրականութեան մէջ գեղարւեստը գիտութիւնից և հրապարակախօ-

սութիւնից, իսկ գործնական կեանքի մէջ ընդհակառակը ցոյց են տալիս բաւականին օգտապաշտ հայեացքներ: Բացի դրանից աչքի է ընկնում ճարպիկութիւն, փափկութիւն, ընդունակութիւն կարճ ժամանակամիջոցում գրաւելու մարդու համակրանքը, նոյն իսկ յաճախ շողոքորթութիւններով, հակում գէպի առանձնականութիւնը, որը շատ դէպքերում հասնում է թունդ եսականութեան, անընդունակութիւն խմբովին գործելու, ընկերական թոյլ կապ, փոքային գործերում ոչ շատ բժախնդիր և վերջապէս կեանքի դժւարութիւնների դէմ մաքառելու աւելի մեծ տոկոսութիւն:

Չեմ կարծում, որ սխալած լինեմ պնդելով թէ ռուսահայերի յիշեալ յատկութիւնները աւելի նման են դերմասականին, մինչդեռ տաճկահայերինը—Ֆրանսիականին: Հետեաբար Պոլսից կամ գաւառներից Փրանսիա եկող տաճկահայ երիտասարդների մէջ բնական կերպով աւելի է ուժեղանում իրանց բնորոշ յատկութիւնները: Նոյնն էլ պատահում է Գերմանիա ուսանող կովկասեան հայերի հետ: Հարկաւոր է սասակայն յիշել և մի հանգամանք, որը ըստ երևույթի ոչ այնքան նշանաւոր, բայց որի ի նկատի չառնելը կարող է թիւրիմացութիւնների պատճառ դառնալ:

Տաճկահայերի մէջ Հարկաւոր է զանազանել ներքին գաւառներից եկող հայր այն հայերից, որոնք գալիս են գլխաւորապէս Պոլսից, Զմիւռնայից և այլ

ծովեզերեայ քաղաքներից. այդ երկու խմբի մէջ բաւականին մեծ տարբերութիւն կայ: Մինչդեռ պոլսեցիք ենթարկւած են Ֆրանսիական և յունական ազդեցութեանը, գաւառացիք զուրկ են որևէ եւրոպական ազդեցութիւնից: Սրանք, զուցէ, ամենախնքնուրոյն հայերն են առհասարակ և մեր վերը յիշած բնորոշ յատկութիւնները մեծ մասով վերաբերում են միայն պոլսահայերին: Սրա հետեանքն է անհրաժեշտաբար, որ Գերմանիա աւելի յաճախ կարելի է գաւառացի թիւրքահայի հանդիպել, քան պոլսեցու: Կամ նոյն իսկ Պարիզում գաւառացի ուսանողը որոշ կերպով շեղում է տիրող տիպարից, որի սուտ մեծամասնութիւնը ներկայացնում են պոլսեցիք: Այդ պատճառով շատ անգամ է դիտւած, որ ընկերական կապ աւելի յաճախ է առաջանում, կովկասեան և թիւրքահայ գաւառացու մէջ, քան կովկասահայու և պոլսահայու: Գաւառացի տաճկահայի տիպարը աւելի անորոշ է և բռնում է միջին տեղը պոլսահայի և կովկասահայի տիպերի մէջ, որոնք արդէն շատ աւելի որոշւած են և այդ պատճառով գաւառացին (թրքահայ) աւելի հեշտ է փոփոխութեան ենթարկւում, նայելով թէ ինչ միջավայրի մէջն է ընկնում: Գերմանիայում նա ձուլւում է կովկասեան հայութեան հետ, Պարիզում—պոլսականի: Գուցէ չափազանցութիւն չըլինի, եթէ որոշակի ասենք, թէ գաւառացի թիւրքահայ ամբողջ իր հոգեկան կազմով աւելի ընդհանուր գծեր ունի ռուսահայերի հետ, քան

թէ պոլսեցու լեզուն, պայմաններն և ընդհանուր ցաւերն են, որոնք աւելի սերտ են կապում նրան պոլսահայերին:

II

Մեր ուսանողութիւնը Գերմանիայում կենդրոնանում է գլխաւորապէս երկու քաղաքներում, Բերլին և Լէյպցիգ: Կան ուսանողներ նաև Միւնխէն, Հալլէ, Գրեզդէն, Միտէլդ, Հէյդելբերգ և ուրիշ տեղեր, բայց շատ սակաւաթիւ, այնպէս որ ուսանողները այդտեղ ուսանողական մարմիններ չեն կազմում:

Մի ժամանակ Լէյպցիգն էր գլխաւոր կենդրոնը: Այդ երևում է արդէն նրանից, որ Լէյպցիգում ահա 15 տարի է գոյութիւն ունի «Հայ ուսանողական ճեմարանական ընկերութիւն» (Armenischer Akademischer Studentenverein), մինչդեռ 90-կան թւականներից առաջ Բերլինում գոյութիւն ունեցող ուսանողութիւնից հետք անգամ չէ մնացել. կարելի է ենթադրել, որ մինչև 90-կան թւականները Բերլինում կային հատ-հատ ուսանողներ, որոնք չունէին ոչ մի ընկերական կազմակերպում: Բերլին, ինչպէս համալսարանական քաղաք, մինչև վերջին ժամանակները հայերի կողմից սիրւած չէ եղել: Պատճառը այն վատ համբաւն է, որով յայտնի էր նա առհասարակ աշխարհին, ինչպէս «ոստիկանական քաղաք», ուր աւելի քան որևէ մի ուրիշ տեղ

Յերոպայում հալածուած և ճնշուած է գիտութիւնը, հրապարակախօսութիւնը և ամեն մի ազատ խօսքը: Խուսափելով մինչև այժմ Բերլինից, հայ երիտասարդները Հետևել են ընդհանուր ընթացքին: 60-ական և 70-կան թւականներին ռուս ուսանողներն ու դիտնականները մտաւոր սնունդ փնտրելիս գիտական և փիլիսոփայական Գերմանիայում, խուսափում էին Բերլինից և հեղեղում հռչակաւոր համարւած համալսարանները—Լէյպցիգի, Բոնի, Միւնխէնի և մանանաւանդ աւանդական դարձած Հէյդելբերգը: Այդ գերազանցումը բոլորում էր ոչ միայն ազատամտական հակումից, այլ ունէր և գործնական հիմք: Յիշեալ քաղաքների համալսարանները յամենայն դէպս միշտ եղել են աւելի հռչակաւոր իրանց գիտական ոյժերով, քան Բերլինը: Սա դառնալով 1871 թ. գերմանական կայսրութեան մայրաքաղաք, սկսեց արագաբար կենդրոնացնել իր մէջ մտաւոր և առհասարակ կուլտուրական լաւագոյն ոյժերը, որով և նրա համալսարանական ուսուցչական կազմը այս վերջին քառորդ դարում ճոխացաւ և մասնագիտօրէն բազմաձև դարձաւ: 70-ական թւականների սկզբին, միակ Լէյպցիգն էր, որը քիչ թէ շատ կարող էր դեռ մրցել Բերլինի հետ իր համալսարանով, սակայն շուտով և նա պիտի հրաժարւէր այդ մրցումից: Արբ Բերլինի համալսարանում կենդրոնացան գիտութեան այնպիսի առաջնակարգ աստղեր, ինչպիսին են Mommsen, Curtius, Droysen, Ranke և որա մահից



յետոյ Treitschke (պատմագետներ), Helmholtz, Kirchhof (ֆիզիկոսներ), Lepsius (եգիպտաբան), Virchov (ախտաբանական անդամադննիչ), Wagner (բնախօս) և ուրիշները, այն ժամանակ Բերլինի Համալսարանի գերագանցութիւնը միւս Համալսարաններից անվիճելի դարձաւ: Բայց աւանդութիւնները միշտ շարունակում են դեռ ոյժ ունենալ, չընայած որ նրանց ստեղծող պատճառը արդէն գոյութիւն չունի, ուստի Հակառակ Բերլինի Համալսարանի անպայման առաւելութեանը, միւս Համալսարանները երկար ժամանակ Հաւասարաբար այցելում էին օտարների կողմից: Ներկայումս, անշուշտ Բերլինի Համալսարանում ուսանող տեղացիների և օտարների թիւը անհամեմատ աւելի բարձր է, քան թէ որևէ տեղ Գերմանիայում:

Ամենից շատ ծանօթ է ինձ Բերլինի Հայ ուսանողութիւնը և որովհետև գերմանական Հայ ուսանողի տիպը ընդհանուր է Գերմանիայի բոլոր քաղաքների Համար, ես կարող եմ առանց մեծ վնասի օգտել գլխաւորապէս իմ անձնական յիշողութիւններիցս և տպաւորութիւններիցս, մանաւանդ որ այդ ուսանողութիւնը, թւով ամենից Հարուստ, արտագրել է նաև ամենից շատ կեանք, ամենից շատ գործունէութիւն, և ամենից շատ է զարգացրել իր մէջ գաղափարների աւելի նուրբ տարբերութիւններ:

1001

Յեռագրելով իր ընկերոջը, որ ուսանում է բարձրագոյն դպրոցներից մէկում, Հայ երիտասարդը, զալով Գերմանիա, գտնում է կայարանում իր այդ ընկերոջը, կամ ընկերներին, որոնք շտապով տանում են նրան իրանց մօտ: Օտար երկրում, աշակերտական Հագուստը դեռ նոր թողած, բոլորովին անփորձ և գրեթէ միշտ տեղական լեզուն անտեղեակ, եկող երիտասարդը, անշուշտ, օգնութեան կարևորութիւն ունի և պիտի խոստովանել, որ ուսանողները ոչ մի ժամանակ չեն կորցնում այն զիտակցութիւնը, թէ որքան անօգնական և աննախանձելի է նորեկ ուսանողի վիճակը: Սիրով փնտրում են նրանք սենեակ, օգնում են Համալսարան մտնելու, խորհուրդ են տալիս իր մասնագիտութեան վերաբերեալ, կեանքի հետ ծանօթացնում և այլն: Բայց և այնպէս, նորեկը դեռ երկար ժամանակ իրան անյարմար դրութեան մէջ է զգում նոր երկրում, որը ամբողջովին տարբերում է այն բոլորից, ինչ որ նա մինչև այդ օրը տեսել և ապրել է Հայրենիքում: Այս հանգամանքը, ինչպէս և անմիջական ու կողմնակի հոգսերը ջղային ցնցում են յառաջ բերում նրա մէջ, և այս պատճառով յաճախ նորեկը առաջին երկու-երեք ամիսը բոլորովին շարեւէ է լինում: Նախ, ինչպէս կարճ միջոցում լեզուն սովորելնա ունի իր հետ ձեռքի բառարան և նրանով սո-

վորում է անգիր ամենագործածելի խօսքերը, բայց գործը դրանով շատ դանդաղ է գնում, իսկ նա շտապում է. ընկերներից մէկը խորհուրդ է տալիս դասեր վերցնել, միւսը կարծում է, որ բաւական է այցելել համալսարանական դասախօսութիւնները, ըսկզբից թէև առանց հասկանալու, ներկայ լինել կիրակայ քարոզներին եկեղեցում. երրորդը պնդում է, որ շատ կարգայ լրագիրներ, խանութների ցուցանակներ, տաւտիկնոջ հետը շատ զրոյց անէ և գերմանացիների հետ ծանօթանայ և այլն, և այլն: Խորհուրդները տասնեակներով թափոււմ են ամեն կողմից. նրանցից իւրաքանչիւրը, թէ առանձին և թէ միասին փորձոււմ են, իսկ անհանդստութիւնից զրգուած նորեկ երիտասարդին թոււմ է, որ նա սարսափելի քիչ յառաջադիմութիւն է անում, շտապելով նա մէկ մեթոդից միւսի վրայ է ընկնում, և չէ կարող կենդրոնանալ նրանցից մէկի վրայ. իսկ շտապում է երիտասարդը, որովհետև նրա շուրջը եռող հետաքրքիր կեանքը հանգստութիւն չէ տալիս նրան. նա ուզում է շուտով մտնել, խրել այդ կեանքի մէջ, ամեն ինչ տեսնել, ճանաչել, ապրել: Այցելելով հայ ուսանողական ժողովները և ուշագրութեամբ հետևելով տաք վիճաբանութիւններին, որոնք մեծ մասամբ ամենախոր փիլիսոփայական հարցերի են վերաբերում, երիտասարդը չըկարողանալով թափանցել բարձր ֆրագների «խորութեանը», բայց գուշակելով նրանց մէջ չափազանց խոր գա-

ղափարներ (չէ որ այդ ամենը կատարոււմ է Եւրոպայում), վառոււմ է այդ ուսանողների զարգացմանը շուտով հասնելու ցանկութեամբ: Ընկերներին հասարակելու ձգտումը յաճախ այնքան սուր է լինում, որ չընայելով ընտրած մասնագիտութեանը, նորեկը սկսում է կարգալ ուսուերէն կամ մի ուրիշ լեզուով փիլիսոփայական և հասարակական գրքեր, նոյն իսկ գերմաներէնից թարգմանւած: Տեսնելով, որ գերմաներէն լեզւի ուսանումը դրանով կաղում է, նա թողնում է այդ գրքերը և նորից վրայ ընկնելով գերմաներէնին, շտապում է գոնէ այնչափ ընտելանալ այդ լեզւին, որ հնարաւոր լինի կարգալ հետաքրքրող աշխատութիւնները գերմաներէն լեզուով:

Եթէ երիտասարդը գալիս է արտասահման աւանց որոշ ծրագրի, եթէ նա շատ յայտնի հակում չունի դէպի գիտութեան այս կամ այն մասնաձիւղը, կամ եթէ նա նիւթական պատճառով չէ կարող սրտին մօտիկ մասնագիտութիւնը ուսանիլ և պարտաւոր է ընտրելու այն գիտութիւնը, կամ արեւստը, որը կարող է ապագայում հաց տալ նրան — բոլոր այս դէպքերում մասնագիտութեան ընտրութիւնը յուրջ երիտասարդի համար շատ դժւար է լինում: Երջանիկ է նա, որի մտաւոր յատկութիւնները, բնական հակումները չեն հակասում իր նիւթական միջոցներին, այլև նրանք, որոնք նիւթական կողմից թէև ապահով, բայց և այնպէս չեն տատանոււմ մասնագիտութիւնն ընտրելիս . այդպիսիները չորս թէ

Հինգ տարում աւարտում են իրանց ուսումը առանց որևէ հոգեկան կոււի: Բայց ընդհակառակը, որքան ծանր բան է, դիցուք գրական ընդունակութիւններ և հակումներ ունեցող մարդուն, ամեն օր ծամծմել այն միտքը, որ նա ստիպւած է հրաժարել իր ձգտումներից, որովհետև կեանքի ապահովութեան հարցը հարկադրում է նրան սովորելու բժշկութիւն, քիմիա, գիւղատնտեսութիւն, կամ մի ուրիշ այդ կարգի գրական գործ: Այդպիսիների դրութիւնը աննախանձելի է, և հետաքրքիր է, որ չընայած այն անորոշ ապագային, որը սպասում է իրանց և չընայած մաշող լարած դրութեան, որ տևում է տարիներ, նրանց մեծամասնութիւնը զանազան զիջումներից և փորձերից յետոյ վերջ է վերջոյ դարձեալ վերադառնում, գալիս կանգնում են իրանց սիրած գործի վրայ: Կան և ուրիշ դէպքեր, երբ երիտասարդը նիւթական պատճառներ չունէր տատանելու, բայց նա այնուամենայնիւ մի մասնագիտութեան վրայ չէ կենդրոնանում: Գա տեղի է ունենում գլխաւորապէս, երբ պատանին սէր ունենալով դէպի վերացական գիտութիւնները ընդհանրապէս չէ կարող սահմանափակել այդ գիտութիւններից մէկով. փլիսոփայութիւնը, մանլավարժութիւնը, հասարակական տեսութիւնը — բոլորն էլ հաւասարապէս հրապուրիչ են նրա համար:

Հայ ուսանողները Գերմանիայում բնակւում են, թէ պանսիօններում և թէ ընտանիքներում, վար-

ձելով այնտեղ առանձին սենեակ առանց սննդի. պանսիօնը, բացի իր ուրիշ լաւ կողմերից ունի և այն առաւելութիւնը, որ եկուորներին աւելի միջոց է տալիս շփելու գերմանացիների ու օտար երկրացիների հետ և ծանօթութիւններ հաստատելու. բայց գերմանացիների և ընդհանրապէս եւրոպացիների հետ մօտիկ լինելը այնքան դժւար է մեզ համար, որ մինչև անգամ պանսիօնն էլ շատ չէ օգնում: Ռուսիայից Եւրոպա եկողները միշտ զարմանում են, թէ որքան առանձնացած և կղզիացած են ապրում այստեղ բնակւող օտար երիտասարդները և մասնաւորապէս — ոչ Եւրոպայից եկածները, ռուսները, հայերը և այլն: Հայ ուսանողին յաճախ իր ուսանողութեան ամբողջ Հինգ տարւայ շրջանում հաղիւ է յաջողւում մի երկու գերմանական ընտանիքի հետ կապեր հաստատել և մի որևէ գերմանացու հետ սերտ բարեկամանալ: Ոմանք տեղեակ չըլինելով եւրոպական կեանքի պայմաններին, այդ երևույթը վերագրում են մեր ուսանողների անշնորքութեանը, բայց դա շատ սխալ է: Քիչ չէ պատահել, որ նորեկը ճիշտ այդ համոզումով եւանդուն կերպով աշխատում է «մտնել» եւրոպական հասարակութեան մէջ, բայց անցնում են ամիսներ ու տարիներ և նա, չըզտնելով որոնած «դուներ», իոնարհւում է և համեստ կերպով զիմում իր հայրենակիցների խմբակին:

Աւելորդ չէ այս հարցը փոքր ինչ պարզաբանել:

IV

Կան մի քանի պատճառներ, որոնք դժարացնում են շփումը գերմանացիների հետ:

Առաջին պատճառը — գերմանացու և հայի բունաւորութեան տարբեր լինելն է: Հայը ջոկուում է գերմանացուց ամենից առաջ այն յատկութիւններով, որոնցով ընդհանրապէս գանաղանուում է հարաւային արեւելեան տիպը հիւսիսային-արեւմտեանից: Հայը սիրում է շատ խօսել, շուտ-շուտ փոխել խօսակցութեան նիւթերը, հեշտ վիրաւորել, դիւրին բարկանալ ու ոգևորել, սիրել և ատել երբեմն առաջին տպաւորութեան ազդեցութեան տակ: Բացի դրանից անգիտակցաբար — արեւելեան բարքերի ազդեցութեան տակ, ինչպէս և դիտակցօրէն — իր գաղափարական հայեացքներից զրդւած, նա չէ տանում չափազանցացրած կանոնաւորութիւնն ու ձևականութիւնը: Ինչ վերաբերում է գերմանացուն, սա ղեկավարուում է ուղղակի հակադիր բնազդներով. նրա մտածողութիւնը դանդաղ է, նա աւելի լսում է քան խօսում, շատ է կենդրոնանում մի նիւթի վրայ, ընդունակ չէ ուժեղ ոգևորութեան, չէ ենթարկուում առաջին տպաւորութիւնների, դիւրին է տանում շրջապատողների իրանից ունեցած տարբերութիւնը, մտածածը և մանաւանդ զգացածը չէ շտապում արտայայտել, դժւար է մտերմանում, ինչպէս և չէ ատում յան-

կարծակի և ընդհանրապէս հաւասար է վերաբերում դէպի ամենքը:

Խոլերիկի և ֆլեգմատիկի մէջ հասարակ ծանօթութիւնը կարող է մտերմութեան հասնել, բայց միայն այն ժամանակ, երբ չընայած բնաւորութիւնների տարբերութեան, նրանց կապում են ընդհանուր գաղափարներ ու ձգտումներ, որը սակայն հայ և գերմանացու մէջ գոյութիւն չունի և դա է երկրորդ պատճառը: Ընդհանուր ձգտումների մասին խօսել անգամ չի կարելի, որովհետև հայի և գերմանացու կենսական շահերի մէջ, նրանց ցաւերի ու յոյսերի մէջ ոչ մի ընդհանուր կէտ չի կարող գոյութիւն ունենալ: Ընդհանուր գաղափարներ նրանք կարող կրլինէին ունենալ, բայց դա էլ գոյութիւն չունի: Ահա թէ ինչու:

Հայ, ինչպէս և ռուս երիտասարդը ղեռ գտրնուում է այն իդէալների ազդեցութեան տակ, որոնք ոգևորում էին գերմանացուն, կամ եւրոպացուն, մօտ 50 տարի սրանից առաջ. նիւթապաշտ ողին այնքան չէ վարակել արեւելքը. որքան արեւմուտքը և կարելի է ասել առանց չափազանցութեան, որ գաղափարական իդէալական ձգտումները աւելի յատուկ են ռուս ինտելիգենտ հասարակութեանը, քան Եւրոպայի, իսկ մեր հասարակութիւնը, ռուս հասարակական շարժումների այս կամ այն ուղղութեան անմիջական ազդեցութեան տակ է: Թէ որքան

ցած է ընկել գերմանացի ուսանողը, բաւական է չի-
շել հետեւեալը.

Բերլինի Համալսարանը ունի աւելի քան 5500
խակական ուսանող. այդտեղ կան մի քանի հետա-
քըքիր ուսանողական ընկերութիւններ, ինչպէս—
«Հասարակական-գոսական», «Գիտական», «Ի-
րաւաբանական» և այլն. բայց այդ ընկերութիւն-
ների անդամների ընդհանուր թիւը հազիւ թէ հաս-
նի 400-500-ի, մինչդեռ նոյն Համալսարանը ունի
գուցէ 50-ից աւելի ուսանողական corporativ ըն-
կերութիւններ, որոնց միակ, բացարձակապէս միակ
ղբաղմունքը դարեջուրն է, երգը և պարտադիր մե-
նամարտութիւնը (թրերով): Բնորոշ մի դէպք: Երկու-
տարի սրանից առաջ վերոյիշեալ լուրջ ընկերութիւն-
ներից մի երկուսը սկսեցին պրոպագանդ անել ուսա-
նողների մէջ մի պատուոյ ատեան հիմնելու (ամար:
Պլխաւոր նպատակն էր չըթողնել, որ կորպորանտի ⁴⁾
և ոչ կորպորանտի մէջ պատահող ընդհարումները

⁴⁾ Կորպորանտ անւանում է որևէ ուսանողական
Corporation-ի պատկանող: Corporation-ները փակ ընկե-
րութիւններ են մեծ մասով հարուստ ուսանողներից բաղ-
կացած. թրով մենամարտութիւնը, որի հետեւանքը ի-
նում է մի երկու տգեղացնող սկիզբի երեսի վրայ, կոր-
պորանտների առօրեայ զբաղումներից մէկն է: Այդ մե-
նամարտութիւնը, որը ուսանողական ամենահին սովորու-
թիւններից մէկն է, ինչպէս միւսնոյն Corporation-ի ան-
դամների մէջ, այնպէս և զանազան Corporation-ների
պատկանող անդամների մէջ պարտաւորեցուցիչ է:

միշտ մենամարտութիւններով վերջանան, այլ ըստ կա-
րելոյն կարգադրեն այդ պատուոյ ատեանի միջոցով:
Բանը նրանումն է, որ այդ ընդհարումները միայն
շատ հազազիւտ դէպքերում փոքր ի շատէ լուրջ
պատճառ ունեն: Կորպորանտին հարկաւոր է երեսի
վրայ սկիզբուկ ունենալ, և որքան շատ, այնքան ա-
ւելի լաւ. այդ սկիզբուկներով նա հոպարտ է, նրանք
իր մենամարտութիւնների ապացոյց են: Բացի դրա-
նից նրա համար առանձին մի հաճոյք է մենամա-
տութեան կանչել ոչ կորպորանտին, որը իր աչքում
մի «Ֆիլիստե է, մի էակ, նիւթական շահերի
մէջ խրաճ և քաջութիւնից զուրկ: Այդ պատճառով
կորպորանտները օգտուում են յաճախ ամեն մի ջնջին
դէպքից այդ «Ֆիլիստերին» կուրի կանչելու համար:
Պրոպագանդի հետեւանքը այն եղաւ, որ Համալսա-
րանի և պոլիտեխնիկումի 8000-ի չափ ուսանողնե-
րից միայն մօտ 500-ը տուեցին իրանց համաձայնութիւ-
նը: Նոյնպէս շատ յատկանիշ է, որ երբ մի corpo-
ration-ը խորհրդակցում էր իր ժողովում պատուոյ
ատեանին մասնակցելու առաջարկի մասին, corpo-
ration-ի մի անգամ վերկացաւ և ասաց, որ նա ի-
րան համար անպատուութիւն կը համարէ, այդ անբա-
րոյական գործին» մասնակցել: Այդպէս են կորպորա-
տիւ ուսանողները, և զարմանալի չէ եթէ հայ և ռուս
ուսանողները, ուրիշ հայեացքների սովոր, նրաց հետ
սերտ ծանօթութիւն չեն անում: Ինչ վերաբերում է

ոչ կորպորատիւ ուսանողներին⁵⁾, սրանք էլ իրանց ոգով այնքան էլ շատ չեն դանազանոււմ կորպորատիւ ուսանողներից, ուստի հայ ուսանողի ծանօթութիւնը գերմանականի հետ «բարեկեցից» աւելի հեռու չէ գնում: Նոյնը առանց չափազանցութեան կարելի է ասել ընդհանրապէս բոլոր գերմանացիների հետ ունեցած ծանօթութիւնների մասին:

Երրորդ պատճառը եւրոպական և արևելեան կեանքի տարբերութիւնն է: Միջին դասի գերմանացիք, թէ տիկիները, թէ օրիորդները և թէ պարոնները, ամբողջ օրը զբաղւած են լինում գործով: Եւրոպայում այլևս չըկայ ժամանակի այն առատութիւնը, որով այնչափ հարուստ է արևելքը, մերաշխարհի այդ գաւառը: Ուստի բնականաբար ընտանեկան երեկոյթները և առհասարակ այսպէս ասած ժամանակ անցկացնելը ընտանեկան շրջանում, աւելի քիչ յաճախ են պատհում այնտեղ քան մեզ մօտ: Ես շեշտում եմ «ընտանեկան» խօսքի վրայ, որովհետև ընտանիքն է հասարակութեան մէջ մտնելու միակ դուռը: Բայց բաւական չէ այն, որ այդ ընտանեկան երեկոյթներն ու այլ զբարձութիւնները

⁵⁾ Սրանց կորպորանտները անւանում են պաշտօնական կերպով «վայրենիներ» (Wilden): Բերլինի համալսարանի պատերի վրայ յաճախ կարելի է տեսնել յայտարարութիւններ հետևեալ դիմումով. «Սու Բերլինի համալսարանի վայրենիութիւնը» (An die Wildenschaft der Berliner Universität).

հազազիւտ են գերմանական, ինչպէս և եւրոպական հասարակութեան այն դասակարգի մէջ, որը մատչելի է մեր ուսանողին. բանը նրանումն է, որ մեր ուսանողը, մի երկու դէպքերից չետոյ արդէն բեզարում է այդ ընտանիքներից: Գերմանական զարձութիւնը նա բաւականին տափակ է գտնում, խօսակցութիւնը անհետաքրքիր և ձևերը չափաւորած ու ոչ պարզ. տնային յիշողութիւնների և բընաւորութեան հակումների ազդեցութեան տակ նա ուրիշ բաներ էր սպասում և հէնց նոյն պատճառներով նա նորից ու նորից զալիս է այն եղրակացութեանը, որ նրա համար ամենաքաղցր շրջանն ու «ընտանիքը» իր հայրենակից ընկերների խմբակն է:

Ի պատիւ մեր ուսանողների Գերմանիայում զբարձութեան հարցը միակ և գլխաւոր պատճառը չէ, որ նրանց չէ յաջողում գերմանական հասարակութեան մէջ մտնել: Բանը նրանումն է, որ այն հասարակութիւնը, որի դռները կարող են բաց լինել մեր ուսանողի համար, այդ հասարակութեան մտաւոր զարգացման ցածր աստիճանի շնորհիւ, առանձին ձգողական ոյժ չէ ներկայացնում նրա համար: «Ի՞նչպէս», պիտի բացականչէ ընթերցողը. «միթէ հայ ուսանողի մտաւոր զարգացումը կարող է աւելի բարձր համարել, քան գերմանական հասարակութեանը»: Ընթերցողը իրաւունք ունի զգրմանալու և յիրաւի դա մի պարագոյս է, որի շուրջը միշտ պտտում են առանց լուծումն գտնելու, երբ խօսք է

գալիս այդ հարցի մասին: Մի կողմից անհերքելի է, որ այն հասարակութիւնը, լինի դա Գերմանիա, թէ մի ուրիշ եւրոպական երկիր, որի հետ մեր ուսանողը փոքր ի շատէ շփումն ունի, մտաւոր դարգացմամբ ցածր է նրանից, և զարմանալին այն է, որ նա իր հայրենիքի հասարակութիւնը, մտաւոր տեսակէտից, աւելի համապատասխան էր գտնում իր այդ տեսակի պահանջներին, քան եւրոպականը: Հետաքրքիր է, որ Ռուսիայից եկած ճանապարհորդները յաճախ գանդատում են որ «գերմանացիք ամենեւին զարգացած չեն»: Միւս կողմից անկարելի է հաշուել այն կարծիքի հետ, իբր թէ մեր կիսասփական հասարակութիւնը եւրոպականից աւելի բարձր է:

Այդ անսպասելի և անհասկանալի դիտողութեան յիշարդ ես այսպէս կը բացատրէի.

Նախ և առաջ եւրոպացին և մանաւանդ գերմանացին պատկանում են այն մարդկանց թւին, որոնք աւելի շատ գիտեն և շատ են զգում, քան արտայայտում, այն ինչ մենք, ընդհակառակը, աւելի շատ ենք խօսում, քան իսկապէս գիտենք: Մենք սիրում ենք կէս ժամուայ ընթացքում դուրս թափել ոչ միայն այն, ինչ որ «ունենք», այլ և ինչ որ չենք. ամեն առիթով մենք պահանջ ունենք յայտնելու մեր «սեպհական կարծիքը»: Խօսակցութեան մէջ գերմանացին սիրում է գործածել «գուցէ», «միթէ», «չէի կարծում», «դուք կարծում էք», «հե-

տաքըքիր է», «փոքր ինչ դժուար է հաւատալ» և այլ սրանց նման խօսքեր: Խօսակցութեան ժամանակ նա աշխատում է իրան ըստ կարելոյն չէղօք պահել. բայց դա դեռ չի նշանակում, որ նա չունի իր սեպհական կարծիքը. ոչ, դա սխալ է, որովհետև մտաւոր ինդիվիդուալիզմը ոչ մի ցեղի համար այնչափ բնորոշ յատկութիւն չէ, ինչպէս գերմանականի համար: Գերմանացին, ինչպէս և առհասարակ եւրոպացին, չէ սիրում մտնել լուրջ վիճաբանութեան մէջ և չէ պաշտպանում իր կարծիքը այն մարդու դէմ, որի հետ արդէն երկար ժամանակից ի վեր ծանօթ չէ. մենք, և բնականաբար մեր երիտասարդը խօսակցութեան սկզբից արդէն սիրում է նետել նրա մէջ ամբողջ իր էութեամբ և այն բացականչութիւններն ու զարձաձքները, որ նա գործ է ածում, ոչ միայն պարզում են կարճ միջոցում իր ինչ լինելը, այլ և ունին անգիտակցական նպատակ վայր գցել խօսակցի «գիմակը»: Դա ընդհանրապէս երիտասարդութեան յատկութիւնն է, ինչպէս առանձին ինդիվիդի, այնպէս և ամբողջ ազգի համար, որ դեռնոր է սկսում կրթել և այդ պատճառով անընդունակ է կեանքի ամեն ի՛ր երևոյթին տալ իր պատշաճաւոր նշանակութիւնը: Քննադատութիւնը ևս ունի իր շիտան: Բաւական չէ քննադատական մըտաւոր ընդունակութիւն ունենալ, անհրաժեշտ է և յարմարել հանգամանքներին — ում հետ ինչպէս վիճաբանել: Այդ տեսակէտից Գրիբոյէզովի Չացկին ուս-

Հասարակութեան Համար արդէն հիմա ծիծաղելի է, իսկ Եւրոպայում ամենևին չէին զարմանալու նրա խելագարութեան լուրին, և Պուշկինը, որը ամբողջ մի գլխով բարձր էր իր ժամանակից, իրաւացի էր ասելով «Горе отъ ума» կատակերգութեան մասին, որ սրա հեղինակը խելօք է, իսկ հերոսը ամենևին ոչ: Այդ բոլորը ի նկատի առնելով, գերմանացու մտաւոր պաշարի, նրա զգացումների և գաղափարների մասին եզրակացութիւն անելու Համար, պէտք է շատ զգուշ վերաբերենք դէպի այն զիտողութիւնները, որ անում են այդ նիւթի վրայ: Եւրոպայում ճանապարհորդող Հայ և ռուս ճանապարհորդները: Քայց անշուշտ այդ զիտողութիւնը ունի ճշմարտութեան իր որոշ մասնիկը, որ կայանում է նրանում, թէ եւրոպացիք սովորած են աւելի մասնազիտութեանը հետևել ի վնաս ընդհանուր զարգացման:

Սակայն դա չէ լիշեալ եզրակացութեան անձիշտ լինելուն զխաւոր պատճառը, որը աւելի հետաքրքիր է: Մեր ռուսանողը կարծում է որ իր Հայրենիքի Հասարակութեան այն շրջանը, այն սուտիճանը, որտեղ նա ապրել է, կամ մուտք է ունեցել, համապատասխան է գերման Հասարակութեան այն շրջանին, որտեղ նա ձգտում կամ սկսել է մտնել: Պա մի սխալմունք է, որի վրայ ուշադրութիւն չէ դարձւած: Հայոց մատաղ սերունդը ռուսանում է հետևեալ միջնակարգ դպրոցներում. զիմնադիա, ըէա-

լական ու մասամբ Հայոց թեմական դպրոցներում: Նա բաղկացած է աշակերտներից, որոնք պատկանում են Հարստութեան ու դասակարգի տարբեր աստիճաններին: Մինչև այդչափ մեր և եւրոպական Հանգամանքները նմանում են միմեանց. սրանից չեստոյ գալիս է տարբերութիւնը, որ հետևեալն է. մեր զիմնադիտը կամ մեր ըէալիտը աւելի է ջուլում մեր Հասարակութեան մէջ, քան օրինակ, գերմանացի զիմնադիտը իր միջավայրում: Պա բացատրւում է մեր կեանքի խաւարով, ուր ոչ միայն ուսում առածը, այլ և դեռ ուսում առնողը արդէն աչքի է ընկնում: Երբ այդ աշակերտը Հասնում է բարձր դասարաններին և միջնակարգ դպրոցը արդէն աւարտելու վրայ է լինում, նա գրեթէ բոլորովին անկախ իր դասակարգի նիւթական պայմաններից, ազատ մուտք ունի մեր Հասարակութեան բոլոր խաւերում: Այդ արտօնութիւնը տալիս է նրան իր ձեռք բերած մտաւոր զարգացումը: Կովկասեան քաղաքակրթութեան արագ ընթանալուն շնորհիւ, ծնողների և օրդիների մէջ կրթութեան զանազանութիւնը մեզ մօտ շատ աւելի մեծ է, քան Եւրոպայում, ուստի մեր Հայրը աւելի է պարճենում, որ իր որդին «զիմնադիտ» է, քան եւրոպացին: Տեսէք, թէ ինչ զիրք ունի զիմնադիտի, ըէալական և թեմական դպրոցի մեր աշակերտը զաւառներում և մինչև անգամ կենդրոնական քաղաքներում: Ուզում եմ ասել, որ մեր միջնակարգ

գպրոցի աշակերտը, անկախ իր ընտանիքի հասարակական դիրքից, մեծ մասով մասնակցել է իր քաղաքի ոչ միայն միջակ բուրժուազիայի ընտանեկան ու հասարակական կեանքին, այլ յաճախ և բարձր բուրժուազիական կեանքին: Այդ միջակ ու բարձր բուրժուազիան պարունակում է իր մէջ ոչ սակաւ անձեր, որոնք ուսանել են բարձրագոյն գպրոցներում, այնպէս որ այդ շրջանների մէջ շրջել մեր երիտասարդների համար մտաւոր տեսակէտից պիտի բաւական հետաքրքրական լինի: Քացի դրանից նոյն շրջանների նիւթական պայմանները թողնում են ընտանիքի անդամներին բաւական ազատ ժամանակ, որ ծախսուում է գանազան զարճալի ձեռնարկութիւնների վրայ, ինչպէս երեկոյթների, ընդունելութիւնների և այլն: Այդպիսով, միջնակարգ գպրոցների բարձր դասարանների որևէ աշակերտ, կարող է գտնել այս շրջաններում ոչ միայն հաճոյք, այլ և իր մտաւոր զարգացման բաւականին համապատասխան միջավայր:

Աերջացնելով այդ գպրոցը, նա գալիս է արտասահման, օրինակ Գերմանիա: Ո՞ր շրջանն է նա ընկնում: Ո՞ր դասակարգին են պատկանում այն մի քանի անհատներն ու ընտանիքները, որոնց հետ նա ծանօթանում է, կամ աւելի ճիշտն ասած, որոշ չափով կենսական կապեր է հաստատում ժամանակի ընթացքում: Նա կարծում է, որ ընկնում է նոյն դասակարգը, որին պատկանել է կամ սովոր է եղել

Հայրենիքում: Ո՛չ, դա սխալ է: Նա ընկնում է, յամենայն դէպս, մի ասիճնանով ցածր դասակարգի մէջ: Եւրոպացիք մեղնից շատ և աւելի Հարուստ են, այնպէս որ տնտեսական պայմաններով մեր բարձր բուրժուազիան համապատասխան է նրանց միջակ բուրժուազիային, մեր միջակը—նրանց ստորին, մեր ստորինը—նրանց բանւորականին, իսկ մեր բանւորականը—գուցէ պրոլետարիատին: Երևակայենք, օրինակ, որ մեր միջակ բուրժուազիային պատկանող մի երիտասարդ գայիս է Ռերլին: Այստեղ մի ընտանիքի մէջ վարձում է նա իր համար մէկ սենեակ: Բնակարանի կահկարասիքից և ամբողջ կարգ ու սարքից նա եզրակացնում է, որ այդ ընտանիքը պատկանում է գերմանական միջակ բուրժուազիային: Պատահում է յաճախ, որ այդ կարգ ու սարքը աւելի շքեղ է լինում և ընտանիքի նիւթական միջոցները աւելի բարձր, քան մեր միջակ բուրժուազիայինը: Ժամանակի ընթացքում նա մտերմանում է այդ ընտանիքի անդամների հետ, նրանց միջոցով ծանօթանում է ուրիշ ընտանիքների և անձանց հետ. մի խօսքով, նրա շուրջը կազմում է մի շրջան, որի անդամները պատկանում են միևնոյն գասակարգին: Զուտով նա սխտում է նկատել, որ այդ ծանօթները անհետաքրքիր են նրա համար մտաւոր տեսակէտից, նա սկսում է ձանձրանալ նրանցից. ապա առաջ է գալիս նրա մէջ հետաքրքրութիւն, թէ ինչպէս կարելի է բացատրել այն անհասկանալի ե-

ըլույթը, որ այդ շրջանը իր մտաւոր զարգացմամբ աւելի ցածր է քան այն շրջանը, որտեղ նա պտտել է հայրենիքում: Կարծելով, որ իր տնային և եւրոպական շրջանները միևնոյն համապատասխան դասակարգին են պատկանում, նա ստիպւած է եզրակացնել, որ միակ բացառութիւնը կայանում է նրանում, որ գերմանացիք առհասարակ մտաւոր զարգացմամբ մեղնից ցածր են: Բայց նա չէ կարողանում որոշակի կերպով այդ ասել, որովհետև անկարելի է նրա համար Հաշտել այդ եզրակացութեան հետ, և հարցը մնում է բաց:

Եզրակացութիւնը չէ համապատասխանում իրականութեանը, որովհետև հիմքերը ճիշտ չեն: Բանը նրանումն է, որ այն ընտանիքը, որտեղ վարձում է լիշեալ ուսանողը իր սենեակը, և այն ծանօթութիւնները, որ նա ձեռք է բերում այդ ընտանիքի միջոցով, պատկանում են գերմանական ոչ-միջակ, այլ սոոր բուրժուազիային:

Ընկնելով սոոր բուրժուազիայի դասակարգը, այսինքն այն զարակարգը, որ ամենակիցն է բանւորական դասակարգին, մեր ուսանողը, անշուշտ, հանդիպում և շփում է այնպիսի պայմանների հետ, որոնք յատուկ են այդ շրջանին: Ահա և պատճառը, թէ ինչու նա չէ դտնում այստեղ ոչ բարձր զարգացում, ոչ նուրբ ճաշակ, ոչ էլ բաւական ազատ միջոց ժամանակ անցկացնելու համար: Ահա, թէ ինչու, երբ մեր ուսանողը փորձում է այցելութիւն անել իր ծա-

նօթ ընտանիքին, նա գրեթէ հրաժարւում է երկրորդ անգամ կրկնել նոյնը, որովհետև տանտիկինը գալիս է նրան ընդ առաջ բանալիները ձեռքին. ընտանիքի գրեթէ ոչ մի անդամը տանը չեն լինում, ամեն մէկը զնացած է իր գործին, կամ եթէ տանն է լինում, զբաղւած է նոյնպէս: Մեր ուսանողի այցելութեանը անկեղծօրէն ուրախ են լինում, նա սիրով ընդունւում է, բայց մի քառորդ ժամ խօսակցելուց լետույ, նա հեռանում է պարզ զգալով որ դրա նման այցելութիւններով հասարակութեան մէջ «մտնելու» զործում նա մի վերշոկ առաջ չէ գնացել:

Եթէ հնարաւոր լինէր, որ մեր ուսանողը ընկնէր եւրոպական միջակ կամ բարձր բուրժուազիայի շրջանը, այստեղ նա կրգտնէր առատօրէն ինչպէս առհասարակ բարձր կրթութիւն, այնպէս և մտքի ու ճաշակի նուրբ զարգացում: Որովհետև այդ շրջանը ընդհանրապէս աշխատանքով ճնշւած չէ և մանաւանդ իգական սեռը որոշ զբաղմունք չունի, ուստի ժամանակի առատութիւնը թույլ է տալիս տանտիրուհուն և օրիորդներին զբաղելու ընդունելութիւններով, սալոն պահելով և այլն: Եթէ մարդ ընկնի այդ շրջանը, նա շուտով կը յագենայ զանազան հրաւերներից և կարճ միջոցում կը ծանօթայ բազմաթիւ ընտանիքների ու անձերի հետ: Սակայն բանը նրանումն է, որ մեր ուսանողը չէ կարող մինչև անգամ երազել այդ շրջանը մտնելու, նախ

նիւթական միջոցների և յետոյ ժամանակի սակաւութեան պատճառով: Մեր ուսանողների շատ քչերի նիւթական միջոցներն են թոյլատրում այդ դասակարգի տոնով ապրելու: Սուտար մեծամասնութեան համար դժւար է մինչև անգամ մրցել ստորին բուրժուադիայի հետ:

Ուրեմն դուրս է գալիս որ մեր ուսանողը կամայ թէ ակամայ, չէ շփուում ոչ գերմանական ուսանողների, ոչ էլ գերման հասարակութեան միջակ ու բարձր բուրժուադիայի հետ: Նրա համար մնում է միայն մի դասակարգ, որը անւանւում է յատկապէս ինտելիգենտ դասակարգ. այդ դասակարգը բաղկացած է գրողներից, հրատարակախօսներից, գիտնականներից, զեղարւեստագէտներից և այլն. անշուշտ այս շրջանը ամենահետաքրքիրն է նրա համար և սրտին մօտ: Բայց կարիք չըկայ բացատրելու, որ այս շրջանը նայնպէս փակ է նրա համար: Ինչո՞ւ: Որովհետև մեր ուսանող երիտասարդը փոխադարձաբար չէ կարող հետաքրքիր լինել այդ անձանց համար: Եւրոպացի գրողը, զեղարւեստագէտը, հրատարակախօսը, գիտնականը, այնչափ զբաղւած են իրանց գործով, որ բնականաբար սահմանափակում են իրանց փոքր ի շատէ սերտ ծանօթութիւնը, իրանց համար հետաքրքիր ու մտքի տեսակետից օգտաւէտ անձերով, ուստի մեր երիտասարդի ոչ իսկական զիտելիքները, ոչ էլ ուսանողական

տիրուհոսը այդ մարդկանց համար ձգողական մի ոյժ չեն կարող ներկայացնել:

Այդպէս ուրեմն, կարծեմ պարզ է այլևս, թէ ինչու գերմանական, ինչպէս և եւրոպական հասարակութեան դուները փակ են մեր ուսանողների համար: Բնականաբար, մարդիկ որոնելով, հայ երիտասարդը ստիպւած է լինում բաւականանալ իր հայրենակիցներով, որոնք և կազմում են, գոնէ Գերմանիայում, նրա ամենասիրելի հասարակութիւնը:

V

«Եւրոպայի Հայ Ուսանողութեան Միութեան» 1897/1899 թ.թ. տեղեկագրին նայելով, 1898/99 տարիների ձմեռւայ սեմեստրին ⁶⁾ Գերմանիա ուսանել են այսչափ Հայ ուսանողներ. Բերլին—20, Լէյպ-

⁶⁾ Գերմանիայի և առհասարակ արտասահմանի ուսման շրջանը մերի նման չէ: Ամբողջ տարին բաժանւում է այնտեղ երկու ուսման շրջանների, որոնց սահմանները զանազան երկիրներում փոքր ինչ տարբեր են: Այդ շրջանները անւանւում են «սեմեստր»: Ձմեռւայ սեմեստրը Գերմանիայում տևում է հոկտեմբերի 15-ից մինչև մարտի 15-ը. իսկ ամռնայինը—ապրիլի 15-ից մինչև օգոստոսի 15-ը: Տեղեկագրի վիճակագրական մասում չէ յիշւած, թէ վիճակագրական տեղեկութիւնները իր սեմեստրին են վերաբերում: Եթէ չենք սխալուում—1898/1899 ձմեռւայ սեմեստրին:

ցիդ—11, Միւնիւէն—8, Գարմշտադտ—6, Հայլէ—3, Փրայբերդ—3, Գրեդէն—2 և Խրեսլաւ—1. Ընդամենը—61 ուսանող: Ինչ վերաբերում է մնացած երկիրներին, Զւէցարիա նոյն շրջանում ուսանել են. ժրնէ—18, Յիւրիւս—7 և Լոդան—6. Ընդամենը—31. Իսկ Փրանսիա ուսանողները այսպէս են դասաւորուած. Մոնպելիէ—10, Նանսի—9. Ինչ վերաբերում է Պարիզին, «Տեղեկագիրը» ասում է. «Պարիզի ուսանողների մասին տեղեկութիւններ չըկան, 50-ի մասին կայ, թէ ինչ էին ուսանում 1897/1898 թ., իսկ (?) ընդհանուր թիւը կազմում է մօտաւորապէս 130 (?) հոգի»⁷⁾: Պիտի շտապեմ նկատել,

⁷⁾ Զւէցարիայի և Փրանսիայի տեղեկութիւնները թերի են, ոչ միայն թւերի տեսակէտից, այլ և ծննդավայրի, մասնագիտութեան և այլ կէտերի վերաբերմամբ. Այս հանգամանքը պատահական չէ, այլ ընդհակառակը շատ բնորոշ է: Տեղեկութիւնների թերութիւնը բացատրելի է այստեղ առաջինը՝ նրանով որ տաճկահայերը անընդունակ են խմբական գործին և զուրկ են այգպիսի հետաքրքրութիւնից, ուստի և գրեթէ անկարելի էր Փրանսիայից և Զւէցարիայից աւելի ճիշտ ու մանրամասն տեղեկութիւններ ստանալ. այս պատճառաբանութիւնը հաստատում է հէնց նրանով, որ Զւէցարիայից ստացած տեղեկութիւնները աւելի լիւ էն, քան Փրանսիայից, որովհետեւ Զւէցարիայի հայ ուսանողութիւնը կազմուած է ինչպէս սկզբից չիշեցինք, կիսով չափ ուսասնացերից ու տաճկահայերից: Թերութեան երկրորդ պատճառը կարելի է համարել այն երկուցիւրը, որ որոշ զէպքերում շատ դժւար է հաստատել, թէ ինչ է ուսանում, օրինակ Պարիզում, այս ինչ տաճ-

որ հարկաւոր է զգուշ վերաբերել զէպի այս թւերը: Կարելի է գրեթէ բոլորովին վստահ լինել միայն Գերմանիայի մասին յայտնած տեղեկութիւնների վերաբերմամբ. աւելի քիչ են հաւատ ներշնչում Զւէցարիայի, և մանաւանդ ժրնէի, իսկ Փրանսիայի ու առաւել ևս Պարիզի թւերը անշուշտ պարունակում են իրանց մէջ շատ նշանաւոր թելութիւններ: Նախ, անկասկած, բացի չիշուած երեք քաղաքից, Փրանսիայի և ուրիշ համալսարանական քաղաքներում հայ ուսանողներ կան, և երկրորդը, ամենահաստատ կերպով կարող եմ ասել որ ոչ մի կերպով Պարիզում 1897/98 թ. հայ ուսանողների ընդհանուր թիւը չէ կարելի հաշուել 130, այլ ամենաշատը 10—70:

Ահա և վիճագրական տեղեկութիւններ Գերմանիայի հայ ուսանողների մասին, որը այստատպում ենք չիշեալ Տեղեկագրից:

կահալը: Երբ տալիս էք սրան այգպիսի մի հարց, ստանում էք չաճախ պատասխան. «Գրականութեան կըհետեւիմ»: «Գրականութիւն» իսուքը պարզ գաղափար չի տալիս իր մասնագիտութեան ինչ-ինչեւու մասին, իսկ «հետեւել» իսուքը աւելի թոյ է պարզում իր վերաբերումը զէպի մասնագիտութիւնը:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

1. Բերլին⁸⁾

Թիւ	Ինչ հիմնարկութիւններէն են եկած	Ինչ են ստորում	Մենդավայր	Որքան սեմեսար են լսել
1	Ներս. դպր.	փիլիսոփ.	Վան	VI
2	Ռէալ. և Dr. philos.	բժշկ.	Հուշի	XII
3	Ռէալ.	բնագիտ.	Բագու	VI
4	Ռէալ. և Ին-ժին. ինստիտ.	մեքենայագիտ.	Հուշի	I
5	Գիմնազ. VPI	Հասար. գ.	»	I
6	Առևտր. դպր.	» »	Ռոստով	V
7	Գիմնազ. VPI	փիլիսոփ.	Հուշի	IV
8	» »	քիմիա	»	V
9	Լազ. ճեմ. VI	փիլիսոփ.	Ն. Նուխիջ.	III

⁸⁾ Հետեւեալ ցուցակում գտնուող համառօտութիւնների բացատրութիւնները.

Ներս. դպր. = Ներսիսեան դպրոց. Ռէալ. դպր. = Ռէալական դպրոց (աւարտած), Ռէալ. V = Ռէալական դպրոցի 5-րդ դասարանից, Աեմարան = Գէորգեան ճեմ., Լազ. ճեմ. = Լազարեան ճ., Սանասար. վ. = Սանասարեան վարժարան (Կրգրում), Բերբերեան վ. և Կենդրոնակ. վ. = յայտնի վարժարաններ Պոսում: Փիլիսոփ. = փիլիսոփայութիւն, Հասարակ. գ. = Հասարակական գիտութիւններ: Երբ գրւած է, օրինակ. «Ռէալ. դպր. և Dr. philos.» նշանակում է, որ այդ ուսանողը համալսարանը աւարտելով ուսումնասիրում է մի նոր մասնագիտութիւն:

10	Թեմ. դպր.	քիմիա	Հուշի	III
11	Ռէալ. դպր. V	Հասար. գ.	»	I
12	Գիմնազ. VPI	» »	Աստրալս.	III
13	Աեմարան	երաժշտ.	Կուտինա	V
14	Գիմն. և բժշկ.	բժշկ.	Թիֆլիս	I
15	Ֆրանս. դիմն. (Կոլէժ)	»	»	XI
16	Ռէալ.	քիմիա	Հուշի	?
17	»	գիւղատն.	Գեօկչ. գ.	IV
18	» VI	բժշկ.	Ղրիմ	II
19	Ռէալ.	քիմիա	Հուշի	VPI
20	»	Հանք. գ.	Մեղրի	V
21	»	բժշկ.	Հագրութ	II
22	Գիմնազ.	մեքենայ.	Թիֆլիս	?
23	Բերբեր. վարժ.	Հասար. գ.	Սամսոն	?
24	Ռէալ.	» »	Հուշի	?
25	Առևտր. դպրոց	» »	Ազուլիս	I
26	Աեմարան	երաժշտ.	Մոզգոկ	I

2. Բրեսլաւ

1	Ռէալ.	մատեմատ.	Ղրիմ	VIII
---	-------	----------	------	------

3. Դարմստադ

1	Ներս. դպր.	մեքենայ.	Բագու	I
2	» »	»	Ախալցխա	III
3	» »	»	Թիֆլիս	II
4	» »	»	Բագու	I
5	» »	»	»	} գեո. չեն գրւել
6	» »	»	Գորի	

4. Իրեզդեհ

1	Ռէալ.	քիմիա	Համախի	VIII
2	»	»	Տրապիզոն	VIII

5. Լայպցիգ

1	Ճեմարան	աստուած.	Մեծ-Սալ.	V
2	Կենդրոն. վարժ.	մանկավ.	Ակն	I
3	Ճեմարան	բնագիտ.	Վաղարշ.	II
4	»	լեզուագիտ.	Հուշի	V
5	Ներս. դպր.	բնագիտ.	Լոուի	I
6	»	պատմութ.	Վան	VI
7	»	Հասար. գ.	Գեօկչայ	V
8	Ռէալ.	քիմիա	Բագու	VIII
9	Գիմնագ.	»	Թիֆլիս	I
10	Ռիգա (?)	»	Համախի	V
11	Ներսիս. դպր.	բժշկ.	Կարին	

6. Հալի

1	Գէորգեան ճեմ.	աստուած.	Սիլիկիա	I
2	»	»	Ղազախ	V
3	»	քիմիա	Լոուի	I

7. Միւնխեն

1	Ռէալ.	մեքենայ.	Հուշի	XII
2	»	»	»	XIII
3	»	»	Թիֆլիս	III
4	»	»	Բագու	III
5	»	»	Համախի	III
6	»	»	»	I
7	»	գրական.	Պոլիս	XII
8	» IV գ.	նկարչութ.	Բագու	V

8. Ֆրայբերգ

1	Ռէալ.	Լեռն. գ.	Սիւնիք	II
2	»	»	Ղուբա	III
3	»	»	Զանդեզ.	III

9. Ենա

1	Ռէալ. և Dr. philos.	բժշկ.	Մեյլրի	I
---	---------------------	-------	--------	---

Աւելորդ չենք համարում տեղեկութիւններ բերել և Յիւրիի համալսարանում ուսանողների մասին, որովհետեւ գերմանական Զւէցարիայի կենսական բոլոր պայմանները գրեթէ նոյնն են, ինչ որ և Գերմանիայի:

Յիւրիս

1	Ռէալ. դպր.	քիմիա	Ֆագու	XIV
2	» »	բժշկ.	Ջուշի	VII
3	Սանասար. վ.	քիմիա	Արաբկիր	V
4	» »	մեքենայ.	Կարին	I
5	Ռէալ. դպր.	քիմիա	Մազրասա	VI
6	» »	Ֆիզիկա	Ջուշի	V
7	Մոսկ. Միք. դ.	»	?	?

Վերը բերած տեղեկութիւններից կարող ենք արդէն հանել հետեւեալ եզրակացութիւնները.

Գերմանիայի և Յիւրիսի⁹⁾ ուսանողներից 55 եկած են Ռուսիայից, իսկ 13 ճաճկաստանից (մէկը անյայտ է). սրանով ապացուցւում է արդէն սկզբից արած ակնարկութիւնը, որ տաճկահայերը խուսափում են Գերմանիայից. ուրեմն բացի ուրիշ ֆակտորներից, ինչպէս ուռուսական միջնորդութիւնը և ուրիշ, գերմանական ազդեցութիւնը տարածւում է մեր ազգի վրայ անմիջապէս նաև ուռուսահայկական ուսանողութեան միջոցով: Անհետաքրքիր չէ նոյնպէս տեսնել, թէ Գերմանիայի ուսանողութիւնը որտեղից է հոսում աւելի, կենդրոնական տեղերից թէ՛ գաւառներից: Եթէ կարելի է ծննդավայրը մեծ մասով բնգունել նաև ինչպէս ուսանողի նախահամալսարանական կրթական միջավայր, որին պատկանում է

⁹⁾ Աչտուհետե ասելով Գերմանիա, ի նկատի կուռնենանք և Յիւրիսը:

և իր ընտանիքը, այն ժամանակ, համարելով Պոլիսը, Թիֆլիսը և Բագուն կենդրոններ, իսկ մնացած տեղերը—գաւառներ, կրտսանանք. Թիֆլիսից և Բագուից եկած են 14 հոգի (Ռոստովից—1) և Պոլսից—1. ընդհանուր=16, մինչդեռ գաւառներից, Կովկասեան—40, իսկ տաճկական—12¹⁰⁾, կամ միասին 52: Այն հանգամանքը, որ Գերմանիա գնում են ուսանելու գլխաւորապէս գաւառացիք, բացատրելի է ինչպէս գաւառական ազգաբնակչութեան գերակշռութեամբ, այնպէս և նրանով, որ գաւառացիք թէև ստանալով իրանց ուսումը յաճախ կենդրոններում, ուսանել են այնպիսի հիմնարկութիւններում, որտեղից ճանապարհ չըկայ կամ առհասարակ դէպի ուռուսաց բարձրագոյն դպրոցները (օրինակ Ներսիսեան դպրոցից ու Գէորգեան ճեմարանից), կամ էլ—համալսարանը, օրինակ ռէալականից: Նոյնպէս շատ հասկանալի է, որ գաւառացիք գերադասում են այդպիսի դպրոցները: Լեզու և պատրաստութեան տեսակէտից նրանց համար աւելի դիւրին պիտի լինի մտնել մեր թեմական ու ուռուսական դպրոցները, քան որևէ գիմնադիան: Բայց թողնենք քննել ցուցակը ծննդավայրի տեսակէտից. այդ տեսակի եզրակացութիւնները այստեղ շատ խախտու պէտք է

¹⁰⁾ Թէպէտ սրանցից բոլորն էլ սովորել են կամ Պոլսի վարժարաններում, կամ Կովկասի հաշոց թեմական դպրոցներում, միայն երկու հոգի եկած են Սանասարեան դպրոցից (Երզրում):

լինեն, որովհետև ծննդավայրը, նիւթական միջավայրը և ընտանիքի տեղական գոյութիւնը, շատ և շատ զէպքերում միմեանց չեն համապատասխանում և անշուշտ երկու վերջին հանգամանքները աւելի ուժեղ ֆակտորներ են, քան առաջինը:

Եթէ դասաւորենք ուսանողներին ըստ նախահամալսարանային զպրօցների, այսպիսի թւեր կըստանանք. աւարտած ռէսյականներ 28 հոգի, հայոց թեմ. զպրօցներ 12, Գէորգեան ճեմարան 8, չաւարտած զիմնագիտականներ 4, Սանասարեան, Կենդր. ու Բերբերեան վարժարաններից 4, աւարտած զիմնագիտականներից 3, չաւարտած ռէալ. 3, մնացած զպրօցներից 6. ընդամենը 68: Բաւական է աւարտած ռէալականների թւին (28) աւելացնել աւարտած զիմնագիտականների, ներսիսեանների ու Գէորգեանների թւերը (23), որպէսզի վերջնականապէս ցրել այն սխալ կարծիքը, իբր թէ Գերմանիա (կամ արտասահման) ուսանում են «գանազան անյաջողներ» (ինչպէս ռուսներն ասում են «неудачники» ¹¹⁾: Եթէ մինչև անգամ թույլ տանք մեզ նայելու մեր հոգևոր միջնակարգ ուսումնարաններում աւարտած երիտասարդների վրայ, որպէս կենսական մրցման տեսակէտից որոշ չափով «անյաջողների» վրայ, այն ժամանակ ևս աւարտած ռէալականների ու զիմնագիտականների ընդհանուր թիւը—

¹¹⁾ Սա գուցէ ամենապիսաւոր եզրակացութիւնն է, որ մենք անում ենք:

31 այնքան մեծ թիւ է, որ ստիպւում է շատ կասկածամիտ լինել զէպի վիշեալ տարածւած կարծիքը. և վերջապէս պարզ երևում է, որ ուսում չաւարտողների թիւը 3-ից բարձր չէ անցնում (ռէալ. 4, գիմն. 4, Լազար. ճեմ. 1):

Ըստ մասնագիտութեան ուսանում են

բժշկութիւն 8	երաժշտութիւն 2
քիմիա 14	գրականութիւն 1
մեքենայագիտութ. 15	հասարակական գ. 7
հանքային գործ . 4	փիլիսոփայութիւն . 2
գիւղատնտեսութիւն 1	աստուածաբանութիւն 3
բնագիտութիւն . . 3	մատեմատիկա . . . 1
մանկավարժութիւն. 1	նկարչութիւն . . . 1
	ֆիզիկա 2
	լեզւագիտութիւն . . 1
	պատմութիւն 1

ընդամենը 46

ընդամենը 21

Եթէ առաջին սիւնը համարենք գործնական գիտութիւններ, իսկ երկրորդը—տեսական, կերևայ, որ մեր գերման ուսանողներից աւելի քան $\frac{2}{3}$ նւիրւած է գործնական մասնագիտութիւններին: Արոշելու համար, թէ որքան դա ընդհանուր կամ արտակարգ երևոյթ է, հարկաւոր է այդ թւերը համեմատել ռուսաց համալսարաններում և բարձրագոյն զպրօցներում ինչպէս հայ, այնպէս և ռուս ուսանողների թւերի հետ: Այդպիսի տեղեկութիւններ,

չունենք: Յամենայն դէպս կարելի է ասել. թէպէս հաւանական է, որ մեր ուսանողութիւնը արտասահմանում աւելի է նւիրւած տեսական գիտութիւններին քան Ռուսիայում, այնուամենայնիւ, ինչպէս վերոյիշեալ թւերը ապացուցանում են (: 1 ու 46) ոչ այն չափով, ինչպէս հաւատացնում է այդ կէտի վերաբերմամբ տիրող կարծիքը:

VI

Չանազան քաղաքներում մեր ուսանողները փորձել են կազմել ուսանողական ընկերութիւններ ներքին նպատակներով—նպատել ուսանողների մրտաւոր շփմանը: Այստեղից-այնտեղից մինչև անգամ ցանկութիւն է արտայայտւած եղել, աշխատել զրական թարգմանութիւններով ծանօթացնել հայ հասարակութեանը Եւրոպայի հետ և ընդհակառակը: Սակայն բնական է, որ այս ինքնըստինքեան զեղեցիկ ցանկութիւնը միշտ մնացել է առանց իրագործութեան, որովհետև ուսանողը առանց այն էլ բաւականաչափ պարտաւորութիւններ ունի դէպի իր անմիջական գիտական նպատակները:

Թէ որն է եղել Գերմանիայում այդպիսի ընկերութիւններից ժամանակակից կարգով առաջինը—յայտնի չէ: Գուցէ Լէյպցիգինը. 1885 թ. այստեղ կազմւեց «Հայ ճեմարանական ընկերութիւն» (Ar-

menischer Akademischer Verein ¹²⁾: Բոլոր ընկերութիւններից Լէյպցիգինը միակ ճեմարանական ընկերութիւնն է. «ճեմարանական» խօսքը շատ պատւաբեր տիտղոս է հաշուում, որովհետև այդ սասակի ընկերութիւնները գտնւում են համալսարանական վարչութեան հովանաւորութեան տակ. օրինակ, որքան մեղ յայտնի է, որոշ դէպքերում ոստիկանութիւնը կարող է յարաբերութեան մէջ մտնել «ճեմարանական» ընկերութեան անվամբի հետ միայն համալսարանի վարչութեան միջնորդութեամբ: Ճեմարանական ընկերութիւնները ունին որոշ իրաւունքներ գանազան ընդհանուր ուսանողական գործերում, պատգամաւորներ են ուղարկում այս կամ այն հանդիսի առթիւ և այլն: Արտաքին կերպով ընկերութիւնները տարբերւում են այն ժապաւէնների գոյներով, որը կրում են անգամները իրանց վրայ ¹³⁾: Բացի պատւի տեսակէտից ընկերութիւնը ճեմարանական զարձնելն ունի և այն յարմարութիւնը, որ զրանով ընկերութեան գոյութիւնն աւելի երկարատև է դառնում. անգամները ամեն կերպ աշխատում են ընկերութիւնը մնայուն զարձնել արդէն ձեռք բերած տիտղոսից և իրաւունքներից չըզրկելու համար: Բերլինի հայ ուսանողները մի քա-

¹²⁾ «Ճեմարանական» է գործել ընկերութիւնը ոչ 1885 թ., այլ աւելի ուշ:

¹³⁾ Լէյպցիգի ճեմարանակ. ընկ. տեղեկացել է իր գոյների համար Վենետիկի Մխիթարեանների մօտ.

նի անգամ դիմել են Համալսարանական վարչութեան խնդիրքով ճեմարանականացնել իրանց ընկերութիւնը, սակայն միշտ առանց հետեանքի: Համալսարանները առհասարակ խուսափում են ճեմարանականացնել օտարացիների կազմակերպութիւնները, նամանական պրոուսական Բերլինում, իսկ այն բացատրութիւններից, որը տալիս էր Բերլինի Համալսարանի վարչութիւնը մերժելով Հայ ուսանողների վիշեալ խնդիրքը, ուղղակի երևում էր, որ վարչութիւնը յատկապէս անյարմար է Համարում ճեմարանականացնել ռուս հպատակների ուս. ընկերութիւնները:

Լէյպցիգի ուս. ընկերութիւնը ոչ մի ժամանակ չէ կրել որոշ կուսակցական գոյն այն չափով, ինչպէս օրինակ Բերլինի ընկերութիւնները: Պա բացատրելի է երևի նրանով, որ ճեմարանական ընկերութիւնը, ինչպէս փոքր ի շատէ աւելի պաշտօնական ընկերութիւն, պիտի անշուշտ ֆմատչելի լինի անխրտիք ամենքի համար: Աշխարհայեցողութեան միայն սուր տարբերութիւնն է ստիպել ոմանց հեռու պահել իրանց այդ ընկերութիւնից, օրինակ, ասուածաբաններին: 1898/99 ձմեռային սեմեստրին ճեմ. ընկերութիւնը, ունեցել է 9 անդամ. կարդացած է եղել 12 գասախօսութիւն, որոնցից 3 կարդացել են գերմանացիք:

Բացի Լէյպցիգի ուս. ընկերութիւնից, կան ընկերութիւններ նաև Բերլին և մի քանի ուրիշ քա-

ղաքներում, թէպէտ Հարկաւոր է աւելացնել, որ բացի Լէյպցիգից և Բերլինից, մնացած տեղերում թէև և գոյութիւն են ունեցել որևէ ընկերութիւններ, նրանք մի սեմեստրից աւելի երկար չեն տևել. ուսանողների սակաւութիւնն է եղել գլխաւոր և գուցէ միակ պատճառը: Հետաքրքիր է, թէ երբ է կազմակերպւել առաջին ուսանողական ընկերութիւնը Բերլինում: Կարծեմ, սխալած չեմ լինի ասել, որ դա պատահել է 1896 թ., երբ մի երկու պարոն նւիրեցին Բերլինի ուսանողութեանը մօտ 500 մարկ, որպէսզի չքաւոր ուսանողները Հարկաւոր դէպքում կարողանան փոխադարձաբար օգտւել այդ գումարից: Այդ ընկերութեան հիմնելու հէնց առաջին օրերից արդէն անհամաձայնութիւններ ծագեցին, թէ զաղափարական և թէ անձնական: Աերջինը Հարկաւոր է վերադրել ոչ այնքան այն ժամանակաւ ուսանողների բնաւորութեան առհասարակ, որքան մի քանի անձնաւորութիւնների կրքոտ տեմպերամենտին: Այդ ընկերութիւնը երկարատև չեղաւ, որովհետև ինչպէս բոլոր առաջին ընկերութիւնները նա ամփոփում էր իր մէջ Բերլինի բոլոր Հայ ուսանողները, ինչ ուղղութեան և գործի էլ նրանք պատկանէին: Ընտրողներ չըկային. ընկերութեան դռները բաց էին անխտիք ամենքի համար, ով որ ուսանում էր քաղաքի բարձրագոյն դպրոցներից մէկի մէջ: Այդպէս էր և սրանից յետոյ հիմնւած ընկերութիւնների մէջ, սակայն այն գանա-

զանութեամբ, որ սրանք ստեղծելով համամիտներէ խմբով, ժամանակի ընթացքում արտադրեցին որոշ ուղղութիւններ, որի պատճառով հակառակորդները ինքները քաշուած էին ընկերութեան անդամ գըր-ւելու:

Յիշեալ առաջին ընկերութիւնը Ֆերլինում վե-րին աստիճանի բազմադոյն էր. կղերականներ ու արմատականներ, իդէալիստներ ու մատերիալիստներ, զաղափարականներ ու անձնականներ, «կուարար-ներ» ու «հանգիստներ», «կեղծաւորներ» ու «ան-կեղծներ» — սրանք բոլորն էլ միւլենոյն ընկերութեան անդամներն էին: Յիշում եմ այդ ընկերութեան ժո-ղովները: Օրինակ, մի որևէ ուղիկալը դասախո-սութիւն է կարգում, կամ ժողովին մի որոշ առա-ջարկութիւն է անում. կարելի էր վստահ լինել, որ իր դասախոսութեան իւրաքանչիւր տաս խօսքից մե-կը անպատճառ մի խայթոց կը լինի «վարդապետա-կաններին» կամ «յարմարւողներին», իսկ իր առա-ջարկութիւնը պարզ կերպով ուղղւած է սրանց կամ միւս հակառակորդների դէմ: Կղերականները ականջ-ները սրում են, «անձնականները» կշռում են այս կամ այն կողմից յաղթանակի շանսերը, իսկ մեծա-մասնութիւնը կնճռոտ ճակատներով և լծնքերը կի-տած ուշադրութեամբ հետևում են ղեկավարների խօսքերին, անզաղար միջամտելով վիճաբանութեան. ծագում էր ահեղ բանակուիւ, նախազահի ձայ-նը խանձում, և բարձրանում էր այնպիսի աղմուկ,

որ լէստորանի ծառան գրեթէ վարանում էր սենեակ մտնել զարեջուր բաժանելու...¹⁴⁾

Այսպէս շարունակել անկարելի էր: Անցան մի քանի ամիսներ և ընկերութեան գոյութիւնը 1891 թ. մարտին ընդհատուեց: Մնաց գանձարանը (ուսա-նողական անդամավճարների շնորհիւ նա սկսեց հե-տզետէ հարստանալ), որը շարունակեց պատկանել Ֆերլինի բոլոր հայ ուսանողներին: Գանձապահը ա-մեն մի սեմեստրի սկզբին և վերջին պարտաւոր է հրաւիրել բոլոր հայ ուսանողներին իրանց հաշիւ ներկայացնելու, իսկ երբ սկսեցին կազմել նոր ըն-կերութիւններ և զգալի եղաւ պահանջ մի մարդ ու-նենալ, որը հոգար ընդհանուր ուսանողական շահե-րը, ուսանողները որոշեցին պարտաւորացնել այդ գանձապահին հրաւիրել ընդհանուր ժողովի Ֆերլինի բոլոր հայ ուսանողներին այն դէպքերում, երբ հար-ցը վերաբերում է Ֆերլինի ամբողջ հայ ուսանողու-թեանը: Վերջիշեալ առաջին ընկերութեան մէջ ա-մենաանհաշտ հանդիտանում էին «մատերիալիստնե-րը», այսինքն նիւթապաշտ վարդապետութեան հա-մակրողները. սրանք բաւականին ուժեղ էին, բայց չընայած դրան, ի սրտէ տտելով «կոմպրոմիսը», սը-րանք դեռ ընդհանուր ընկերութեան գոյութեան օ-րին, մտածում էին բաժանուել ու սեպհական ընկե-րութիւն կազմել: Այդ ցանկութիւնը իրագործուեց

¹⁴⁾ Գերմանիայում ուսանողները իրանց ժողովներն անում են միշտ գարեջրատներում:

1897 թ. նոյեմբերի 20-ին: «Մատերիալիստիկական ընկերութիւնը» դրեց իրան համար նպատակ՝ «ի մի գումարել մատերիալիստիկական աշխարհայեցողութիւն ունեցող ուսանողների և մտքերի փոխադարձ շփումով պարզել այդ աշխարհայեցողութեան վերաբերող կէտերը»: միջոց այդ նպատակին հասնելու—ժողովներ ունենալ և կապ պահել Բերլինից հեռացած ընկերների հետ»: Իր զարգացման գազաթնակէտին «Մատերիալիստ. ընկերութիւնը» հասաւ, որքան մեզ յայտնի է, 1897/98 ձմեռային սեմեստրին, երբ իր անդամների թիւը հասաւ 17-ի: Եթէ չըմոռանանք, որ այդ ժամանակ Բերլին ուսանում էին հազիւ թէ աւելի քան ընդամենը 24 ուսանող, այն ժամանակ կարելի է ասել, որ այդ միջոցին մատերիալիստ հայեցողութիւնը ուղղակի տիրապետում էր Բերլինի հալ ուսանողութեան մէջ: Այդ սեմեստրին ընկերութեան ժողովներում երկու անգամ աւելի շատ (16) դասախօսութիւն է կարդացւած եղել, քան երկու յաջորդ սեմեստրներում միասին վերցրած: Օրինակի համար կըբերենք մի քանի դասախօսութիւնների վերնագիրները. «Մեր սպասելիքները բակտերիոլական քիմիայից», «Բնագիտութիւն և քաղաքատնտեսութիւն», «Գերմանական շկոլայի ազդեցութիւնը Կովկասի կեանքի վրայ», և այլն: Ի հարկէ իրանց դասախօսութեան մէջ դասախօսները անց էին կացնում մատերիալիստ գաղափարներ:

Սակայն այդ տիրապետութիւնը երկար չըտեւեց: Արդէն 1898 թ. ամառային սեմեստրում «Մատերիալիստական ընկերութիւնը» շատ թույլ կերպով էր արտայայտում իր գոյժունէութիւնը: Անդամներից ոմանք վերադարձել էին տուն, ոմանք հեռացել էին մի ուրիշ համալսարան: Նոյն տարւոյ ձմեռային սեմեստրում Բերլին նոր ուսանողներ եկան, այնպէս որ ոչ-մատերիալիստ ուսանողների թիւը այդ ժամանակ Բերլինում այնքան բարձրացաւ, որ մատերիալիստները կազմում էին արդէն բոլոր ուսանողների միայն երրորդ մասը: Պահանջ եղաւ մի նոր ընկերութեան մէջ, և ոչ այնքան հակադիր ուղղութեան ձգտումներ էին, որ նոյն տարւոյ ղեկտեմբերին յաջողեց այդպիսի մի նոր ընկերութիւն ստեղծել, որքան ցանկութիւն՝ մի «ընդհանուր ուսանողական» միութիւն առաջ բերել սուանց ստիպողական գաղափարների: Ընդհակառակը շեշտում էր այն միտքը, որ ուսանողը կեանքի մէջ մտած գործիչ չէ, որ նա պարտաւորում է միայն մտնել այդ կեանքի մէջ, ուստի նրա պարտքն է ծանօթանալ նշանաւոր հարցերի զանազան տեսակէտների ու պարզաբանութիւնների հետ: Թէ որչափ էր իշխում այն ժամանակ այս վերջին գաղափարը, կարելի է եզրակացնել նրանից, որ նոր ընկերութեան հիմնելու օրին անգամ զրեցին մինչև տնգամ «անհաշտ» մատերիալիստ ընկերութեան անդամներից մի քանիսը. թէպէտ այդ մի քանիսը շուտով հեռացան, որովհետ-

աւել նորակազմ ընկերութիւնը («Ֆերլինի ընդհանուր Հայ ուսանողական գրական միութիւնը») ժամանակի ընթացքով սկսեց անդիտակցաբար փիլիսոփայական որոշ գոյն ստանալ, որն էր իդէալիստ աշխարհայեացքը: Դրա պատճառը որոնելու է նախ նրանում, որ այդ «Միութեան» անդամներից շատերը փիլիսոփայութեան, հասարակական գիտութիւնների ու գրականութեան ուսանողներ էին, այսինքն գիտութիւնների, որոնք այնքան յարմար ճանապարհ չեն հանդիսանում դէպի նիւթապաշտ փիլիսոփայութիւնը, որքան բնական գիտութիւնները. մինչդեռ «Մատերիալիստ ընկերութեան» անդամները գրեթէ առանց բացառութեան ուսանում էին մասնագիտութիւններ, որոնք հիմնաւէ կեն անմիջապէս բնական գիտութիւնների վրայ, ինչպէս բժշկութիւն, քիմիա և այլն: Բացի դրանից «Մատ. ընկերութեան» անդամների ներկայութիւնը «Ընդհանուր ուս. ընկերութեան» ժողովներում միշտ տեղի էր տալիս շատ հետաքրքիր ու տաք վիճաբանութիւնների, որոնք կարճ միջոցում փիլիսոփայական կռիւ առաջ բերին երկու ընկերութիւնների մէջ և եթէ սխալ էր այն կարծիքը, որ վերջին ընկերութեան մէջ «միայն իդէալիստներ են նստած», սակայն անշուշտ այդ աշխարհայեացքը այստեղ գերակշռում էր:

Հետաքրքիր սեմեստր էր Ֆերլինի Հայ ուսանողութեան համար այդ սեմեստրը, և հազիւ թէ մի որևէ ուրիշ անգամ ապրած լինի նա դրա նման

մի ժամանակ. կարելի էր կարծել, թէ ուսանողները հաւաքել էին մի համաժողովի, որը պիտի մշակէր բազմատեսակ հասարակական և փիլիսոփայական հարցեր. այնչափ բաղմամբ էին ժողովները, այնչափ շատ հարցեր էին արծարծւում դրանց մէջ և այնչափ լարւած էր ուսանողների միտքը անվերջ վիճաբանութիւններով: Սեմեստրի վերջին՝ մեծամասնութիւնը խոստովանում էր, որ շատ բան սովորեց այդ ժողովներում, թէ «Ընդհ. Հայ Ուս. ընկերութեան» և թէ «Մատեր. ընկեր.»: Ով չըզլիտէ, որ ոչինչ այնպէս չէ զարգացնում միտքը, ինչպէս վիճաբանութիւնը. պիտի ի նկատի առնել և այն սովորութիւնը, որը արդէն աւանդական է դարձել Ֆերլինում ու Լէյպցիգում, այսինքն ընկերութեան անդամները բարոյապէս գրեթէ պարտաւոր են համարում իրանց՝ սեմեստրի ընթացքում դասախօսել գոնէ մի անգամ. նոյն հերթը պահպանւում է, կամ աւելի ճիշտ, պահպանւում էր և նախագահութեան մէջ: Որովհետև նախագահութիւնը պահանջում է որոշ յատկութիւններ, ուստի և իսկական հերթապահութիւնը շուտով այստեղ անտեղի համարեց և որոշեց ամեն մի դասախօսութեան համար ընտրել մի նոր նախագահ, ղեկավարելով նաև նրանով, թէ որքան հմուտ է նախագահը դասախօսի ընտրած նիւթի մէջ. իսկ գործնական ժողովների համար ընկերութիւնները ունէին ամբողջ սեմեստրի համար ընտրած մի նախագահ, քարտու-

զար ու գանձապահ: Ընթերցողը տեսնում է, որ այս պայմանները կազմում են մի խելացի սխտեմ. պարտաւորեցուցիչ դասախօսութիւնները վառ էին պահում ընկերութիւնների գործունէութիւնը, իսկ դասախօսներին առիթ էին տալիս սովորել դասախօսութեան պատրաստելու, այսինքն—նիւթեր հաւաքել, լուսաբանել նրանց և դրանից մի ընդհանրութիւն կազմել, և հէնց այդ պարտաւորութիւնը թող չէր տալիս մասնագէտներին, ընկղմել իրանց արեւտի մէջ և չըհետաքրքրել ընդհանուր գաղափարներով ու ձգտումներով. փոփոխական նախագահութիւնը միջոց էր տալիս մեծամասնութեանը փորձել ոյժերը նախագահութեան արեւտում և աւելի հմտանալ, իսկ գործնական ժողովների համարմշտական նախագահի գոյութիւնը թող չէր տալիս, որ ընկերութեան գործերը մնան անհող ու առանց ընդհանուր ղեկավարութեան: Աւելորդ է յիշել, ի հարկէ, որ այդ ժողովները ունեն իրանց պակասութիւնները (որ ժողովը այդ չունի): Ուրիշ կերպ դա չէր կարող լինել. աշակերտական նստարանը նոր թողած, բոլորովին անփորձ և խմբական գործերի մասին բնաւ գաղափար չունեցող ուսանողից՝ ինչ պարլամենտական սովորութիւններ կարելի է պահանջել, և ես կըշշտեմ, որ ինքնին արդէն միութարական ու գովելի երևոյթ է այն արագութիւնը, որով ձեռք էր բերում այդ փորձառութիւնը, և հէնց նրա համար, որ այդ ընկերութեան ժողովները

մեծ պակասութիւններ ունէին, նրանք դարձան մի լաւ վարժարան քաղաքացիական լատիութիւնների գարգացման համար, ինչպէս և մտաւոր գարգացման ու ճարտարախօսութեան:

Սակայն, ինչպէս երևում է, տեղական ընկերութիւնները ամբողջապէս չէին լազեցնում ուսանողների խմբելու և միանալու պահանջը: Արդէն 1896/97 թ. թ. հարց արծարծւեց, թէ չէ կարելի արդեօք միութիւն առաջ բերել Արոպայի ամբողջ հայ ուսանողութեան մէջ: «Արոպայի հայ ուսանողական միութեան» առաջին տեղեկագրի կարճ, բայց գեղեցիկ լառաջաբանի մէջ ի միջի այլոց կարգում ենք.

«Արդ, շատ բնական էր, որ այսպէս զանազան վայրերում ցրւած հայ ուսանողները պահանջ զգացին ճանաչել իրար, անձնական և ընկերական մտերիմ յարաբերութիւններ և ծանօթութիւններ ստեղծել, զեռ ևս ուսանողական նստարանների վրայից բարեկամական ձեռք մեկնել իրար, բանաստեղծի հետ «եղբայր ենք մենք» գոչելով, համերաշխութեան ոգին զարգացնել. այս շատ բնական էր, որ հայ ուսանողը բարձրանալով իր անհատականից, ետականից, ջանար հասարակական առաքինութիւններով օժտուելու և իր ընկերների հետ միանալով ձգտէր զէպի ընդհանուր իդէալները: Պահանջը նախագծել էր ուղին, մնում էր նախաձեռնող ոգին և ահա «Լայպցիգի հայ ճեմարանական ընկերութիւ-

նը», իր ժողովներում քանիցս յուզած լինելով այդ հարցը, վերջապէս սրանից մօտ 3 տարի առաջ նա- մականերով դիմելով մի քանի ուսանողաշատ քաղաք- ների ուսանողութիւններին, վերջիններին հաւանու- թեամբ և առաջարկութեամբ ստանձնեց գործը և իր միջից ընտրեց մի յանձնաժողով 4 հոգուց բաղ- կացած, որոնց վրայ պարտաւորութիւններ դրեց հը- րաւիրել մի ընդհանուր ուսանողական համագումար», և այլն:

Երկար պատրաստութիւններից յետոյ 1897 թ. յաջողեց կայացնել Հայդելբերգ քաղաքում եւրոպա- կան Հայ ուսանողների առաջին համագումարը, որը տեւեց մի քանի օր, ապրիլի 12—15-ը: Համագու- մարը պիտի կազմէր «Միութեան» կանոնադրութիւ- նը. այս կանոնադրութիւնը ենթարկեց մի քանի աննշան փոփոխութիւնների նոյն քաղաքում կայա- ցած երկրորդ ժողովում, 1899 թ-ին: «Եւրոպական Հայ ուսանող. միութիւնը» այսպէս է որոշում իր նպատակը. «Քարոյական և մտաւոր հաղորդակցու- թեան մէջ դնել Հայ ուսանողական խմբերը և ու- սանողները, սրանց իրար հետ անձնական ծանօթու- թիւններ անելուն նպատակ և ընդհանուր իդէալներ դարձեցնել ուսանողութեան մէջ»: Միջոցներ այս նպատակին հասնելու պիտի լինին տարեկան համա- գումարներ ու պարբերական շրջաբերականներ, որ- տեղ հաւաքած պէտք է լինեն ուսանողների և ու- սանողութիւնների մասին ստատիստիքական և ու-

րիշ տեղեկութիւններ, ինչպէս և համագումարի, ժո- ղովների համառօտած արձանագրութիւնները: «Միու- թեան անդամակցելու իրաւունք ունեն բոլոր Հայ ուսանողները անկախ նրանց մասնակցութիւնից տե- դական խմբերում»:

Տարեկան համագումարը այսպէս է կազմուած. նախորդ համագումարը ընտրում է մի որևէ քա- ղաքի ուսանողութիւն, որը իր միջից կազմում է մի կարգադիր յանձնաժողով յաջորդ համագումարի գործերը հոգալու համար: Կարգադիր յանձնաժողովը նախ հաւաքում է ստատիստիքական տեղեկութիւն- ներ Եւրոպայի բոլոր Հայ ուսանողների մասին և միա- ժամանակ հարցնում է «Միութեան» անդամներից, կամ անդամակցելու ցանկացողներից ինչ առաջար- կութիւն ունին անելու յաջորդ համագումարին, ինչ- պէս և այն, թէ դասախօսել ցանկացողները ինչ նիւ- թի վրայ պիտի դասախօսեն: Երբ անհրաժեշտ պա- տասխանները ստացւում են, յանձնաժողովը հաւա- քում է նրանց և նոր շրջաբերականով ցրում է «Միութեան» բոլոր անդամների մէջ. սրա նպատակն է միջոց տալ այն անդամներին, որոնք մտադիր չեն մասնակցելու առաջիկայ համագումարին, տալ ի- րանց քէները «Միութեան» վերաբերող օկզբնա- կան հարցերի մասին: Այդպիսի անդամները յայտ- նում են համագումարին իրանց քէն կամ անհա- տապէս, կամ էլ ենթարկում են առաջարկած հար- ցերը խմբական քննութեան (ժողովում) ու պալա-

յայտնում համազումարին թեր ու դէմ քէնները: Այդպէս է որոշում նաև կայանալիք համազումարի տեղը: Աշխատում են ընտրել այնպիսի մի քաղաք, որի կեանքը թանգ չէ և որը աշխարհագրական կենդրոն է հանդիսանում համալսարանական քաղաքներում. դրա պատճառով մինչև այժմ ընտրւած են եղել Հայդելբերգն ու Յիւրիխը:

VII

«Երոպայի Հայ Ուսանողութեան Միութեան» մասին մի քանի անգամ յայտնւած են եղել թեր և դէմ կարծիքներ. նոյնը եղել է և համազումարումների նկատմամբ: Սկզբունքով, ի հարկէ չէ կարելի չըհամակրել ուսանողների միանալու ցանկութեանը. եթէ միանալը, որպէս համերաշխութեան ձգտում, ինքըստինքեան օգտաւէտ ու զովելի բան է, այն ժամանակ—նամանաւանդ երիտասարդների մէջ, որոնք ցրւած են օտար երկրում, ուստի այս հարցի քննադատութիւնը պէտք է անւի ոչ թէ սկզբունքով, այլ միայն այն տեսակէտից, թէ որքան ճիշտ են «Միութեան» նպատակները, և եթէ ճիշտ են, որքան հասանելի են նրանք ուսանողների համար առհասարակ և «Միութեան» կողմից ծրագրւած միջոցներով մասնաւորապէս: Սրանք են, մեր կարծիքով, քննադատական սահմանները, և նոյն իսկ այդ սահմանները ի նկատի առնելով, ստիպւած կըլի-

նենք խոստովանելու, որ «Միութիւնը» արժանի է ամեն կողմից ամենաջերմ համակրութեան:

Որքան յայտնի է ընթերցողին, սա է «Միութեան» նպատակը. «Քարոյական և մտաւոր հաղորդակցութեան մէջ դնել Հայ ուսանողական խմբերը և ուսանողները, իրար հետ անձնական ծանօթութիւններ անելուն նպաստել և ընդհանուր իդէալներ զարթեցնել ուսանողութեան մէջ»: Հարկաւոր է խոստովանել, որ սա ոչ միայն բարձր ու գեղեցիկ, այլ մինչև անգամ որևէ ուսանողական մարմնի համար միակ բնական և թոյլատրելի նպատակ է: Հասարակային, կամ ազգային կեանքում կարող են պատահել դէպքեր, երբ ուսանողը գրեթէ պարտաւոր է ոչ միայն անձնական պարտաւորութիւններից դուրս, այլ յաճախ ի վնաս նրանց, գործնականապէս զբաղւելու այդ դէպքերով. սակայն հարկաւոր է ընդունել, որ նա անում է այդ ոչ ինչպէս ուսանող, այլ ինչպէս մարդ առհասարակ, որը անկարող է այդ դէպքերին անտարբեր վերաբերւել և չըբռնել նրանց դիմաց այս կամ այն դիրքը: Սկզբից կարող է երևալ, որ այդ գաղափարների մէջ ոչ մի տարբերութիւն չըկայ, որովհետև երկու դէպքում խօսքը միևնոյն անձնաւորութեան մասին է. բայց դա սխալ է. սրա տարբերումը ուժեղ է իր գործնական հետևանքներով: Ահա մի ապացոյց: Մօտաւորապէս մի տարի սրանից առաջ, արտասահմանեան Հայ թերթերից մէկի մէջ լոյս տեսաւ «Ուսա-

նող» ստորագրութեամբ մի փոքր յօդած, ուղղած «Եւրոպ. Հայ Ուսան. Միութեան» դէմ: Յօդածագրերը յայտնում է իր գայրույթը բաւականին անքաղաքավարի բացականչութիւններով, որ այդ Միութիւնը «զուտ ուսանողական բնաւորութիւն ունի, ըստ ամենայնի մի խոկական ուսանողի նպատակարար և թողատրելի սահմանների մէջ է ամփոփւած և որևէ քաղաքական միտք Հեռու է իր նպատակից»¹⁵): Յօդածագիրը, ըստ երևույթին պարզ գաղափար չունի, թէ ինչ է նշանակում մի որևէ ընկերութիւն կազմել: Երբ մի խումբ անձնաւորութիւններ այս կամ այն նպատակով մի ընկերութիւն են ստեղծում, զրանով նրանք շեղուում են որոշ ձգտումները, որոնք պիտի իրագործեն Հաւաքական օյժերով. բայց դա ամենևին դեռ չի նշանակում, որ նրանք հրաժարուում են զրանով բոլոր մնացած ձգտումներից: Ուսանողական Միութիւնը, որոշելով իր նպատակը, իր անդամներից ոչ մէկին չէ զրկում այս կամ այն հարցով զբաղելու իրաւունքից: նա միայն որսէս ուսանողական մարմին, չէ ուզում ամբողջութեամբ (in corpore) զբաղել ոչ ուսանողական հարցերով: Թէ որքան Միութիւնը ճիշտ է ըմբռնել իր դերը, դա երևում է, ի միջի այլոց և նրանից, որ մի քանի անդամների կողմից Միութեան արած առաջարկութիւնները—Հիմնել

15) Տես առաջին Տեղեկագրի չառաջաբանը.

Միութեան օրդան և հրատարակել Հայերէն թարգմանած գիտական բրոշիւրներ—չանցան. Համագումարը յանձնեց (երևի առաջարկողներին բաւականացնելու համար), մի մասնաժողովի այդ հարցերը մշակել և սրանք, եթէ չենք սխալուում, արդէն բոլորովին մոռացւած են: Բացի դրանից Միութիւնը միշտ աշխատել է կուսակցական գոյն չըստանալու, և եթէ նա չըղարձաւ որոշ կուսակցութեան գործիք (ինչպէս ցանկանում էին այդ ժրնեկի ուսանողներից մի քանիսը), դա, մեր կարծիքով, հարկաւոր է վերագրել գերման Հայ ուսանողութեան աւելի անկողմնապահ և դրական մտածողութեանը:

Ուրեմն Միութեան նպատակները շատ համեստ են: Հասկանալի է, որ ուսանողները առանց այն էլ բաւականաչափ զբաղւած լինելով իրանց ուսման գործով, այդ նպատակները իրագործելու համար կարող են դիմել նոյնպէս շատ համեստ միջոցների՝ որոնք են՝ պարբերական շրջաբերականներ ու տարեկան Համագումարներ իրանց դասախօսութիւններով: Պարբերական շրջաբերականները ինչպէս և տպագրւած Տեղեկագիրները, որի մէջ յայտնուում են ստատիստիքական և ուրիշ զանազան տեղեկութիւններ Եւրոպայում ուսանող բոլոր Հայ երիտասարդների ու օրիորդների մասին, ինչպէս և նախորդ, կամ յաջորդ Համագումարի զբաղմունքների և եղած հարցաքննութիւնների մասին. այդ շրջաբերականները ցրելով ամենուրեք, ի հարկէ պիտի վառ պահեն

ուսանողի մէջ (մի քանիսնների մէջ և միայն դեռ զարթեցնեն) գիտակցութիւնը զանազան երկիրներում ցրւած հայրենակից ընկերների գոյութեան մասին: Կոչն իսկ այն մեծ նամակագրութիւնը, որը առաջ է գալիս կարգադիր լանձնաժողովի և բոլոր ուսանողութիւնների մէջ, ստատիստիքական ու այլ տեղեկութիւններ ժողովելու համար շատ է նպաստում ուսանողութիւնների միջև կապեր հաստատելուն: Արդէն չենք խօսում այդ տեղեկութիւնների սեպհական արժէքի մասին, որոնց շնորհիւ, յամենայն դէպս, նիւթ է կազմուում մեր ուսանողական հարցի վերաբերմամբ. իսկ մեր գրականութիւնը չէ կարող պարծենալ ստատիստիքական հարստութիւնով: Անշուշտ, բարոյական ու մտաւոր հաղորդակցութիւն ձեռք բերելու համար, համագումարները ամենաուժեղ միջոց պիտի համարուեն. բայց ցաւօք, «Միութեան» անդամները չեն կարող յաճախ դիմել այս միջոցին, նախ ժամանակի և երկրորդը նիւթական միջոցների պակասութեան պատճառով: Ուսումնարանական արձակուրդները Գերմանիայում լինում են տարեկան երկու անգամ, ապրիլին և օգոստոս—սեպտեմբերին. ուրեմն համագումարները կարող են կայանալ, յամենայն դէպս, տարեկան ոչ աւել քան երկու անգամ. սկզբից, իսկապէս, այդպէս էլ մտադրւած էր անել, բայց շուտով իրականութիւնը ցոյց տւեց, որ բաւականին դժւար է համագումար կայացնել նոյն իսկ տարեկան մի անգամ: Եղած հա-

մագումարներում ներկայ են եղել ոչ աւել քան 20—30 ուսանողներ, այսինքն մի (Թիւ, որը շատ փոքր է համեմատ Միութեան անդամների քանակութեան հետ ¹⁶⁾): Մեր արտասահմանեան ուսանողութեան մեծագոյն մասի նիւթական միջոցները շատ նւազ են. եթէ, օրինակի համար, համագումարը պիտի լինի Հէյդելբերգ քաղաքում, այն ժամանակ Բերլինի կամ Փրնէի ուսանողը ստիպւած կըլինի ծախսել ամենապակասը 60—70 մարկ (30 ռուբլի) համաժողովը այցելելու համար, որը տուում է 4—5 օր: Բայց այնուամենայնիւ յաճախողների թիւը աւելի մեծ կըլինէր, եթէ գոյութիւն չունենար մի ուրիշ արդելք. ուսանողներից շատերը օգտուում են արձակուրդներից հայրենիքը այցելելու, կամ Եւրոպայում ճանապարհորդելու նպատակով—մի բան, որ շատ սովորական է նաև գերմանացի ուսանողների մօտ: Չորս կամ հինգ օրւայ միջոցում համագումարը ունենում է մօտ 7—10 նիստ, այսինքն, օրական երկու նիստ. աւելացրէք սրան և զանազան զւարճութիւններ, ինչպէս զբօսանք և ուրիշ, ու կըտեսնէք, որ այդ 4—5 օրը համաժողովի անդամները ապրում են շատ լարւած կերպով: Չընայած, որ դա բաւականին յոգնեցնում է, անկարելի է այ-

¹⁶⁾ 1897/99 թ. թ. Տեղեկագրի համաձայն, այդ ժամանակ ուսանել են Եւրոպայում մօտաւորապէս 230 ուսանող. Չրգիտենք, թէ սրանցից քանիսն են «Միութեան» անդամ. եթէ չենք սխալուում—մեծամասնութիւնը:

նուամենայնիւ Համաժողովը աւելի երկարատե շինել: Նիստերի զբաղմունքները լինում են դասախօսութիւններ, որոնք տաք վիճաբանութիւնների առիթ տալով, մտաւոր փոխանակութեան Համար, ամենայաջող միջոց պիտի նկատեն. ինչ վերաբերում է բարոյական շփմանն ու անձնական ծանօթութեանը, գրանք ի հարկէ, աւելի են յաջողում նիստերից դուրս, երբ երիտասարդները շփուում են իրար հետ ոչ պաշտօնապէս, այլ զուտ բնկերաբար: Չնորհիւ այն հանգամանքի, որ հիւրերի մեծամասնութիւնը ծանօթ է լինում իրար հետ արդէն Համագումարներից առաջ, ընդհանուր ծանօթութիւնը ձեռք է բերում ամենակարճ միջոցում: Հէյդելբերգում (Գերմանիա) 1897 թ. տեղի ունեցած առաջին Համաժողովում ներկայ են եղել 22 ուսանող. սրանք բոլորն էլ բնակւում էին մի հիւրանոցում, որտեղ կարգադիր յանձնաժողովը վաղօրօք սենեակներ էր վարձել: Որ խմբական զբօսանքները շատ աղմկալի են եղել, կարելի է եզրակացնել նրանից, որ Հէյդելբերգի «Le Figaro»-ի թղթակիցը, հեռագրել էր լրագրին «յունական» ուսանողների մասին¹⁷⁾:

17) Այդ ժամանակ արդէն սկսել էր տաճկա-յունական պատերազմը և որովհետև յոյն երիտասարդները ամեն տեղերից կանչւում էին հայրենիք, գինւորական ծառայութեան, ուստի թղթակիցը հաւատացած էր, որ մեր թխագոյն երիտասարդները, խօսելով նրա համար անձանօթ լեզուով, անտարակոյս պիտի յոյներ լինեն.

Այժմ կարելի է հարցնել, թէ «Յւրոպ. Հայ Ուս. Միութիւնը» իր երեք տարւայ գոյութիւնից յետոյ ինչ հետեւանքներ տւեց: Կարողացաւ նա, արդեօք, փոքր ի շատէ մօտենալ այն նպատակին, որի համար կազմեց այդ «Միութիւնը»: Գոյութիւն ունի արդեօք Յւրոպայում ցրւած Հայ ուսանողների մէջ որևէ «բարոյական ու մտաւոր Հաղորդակցութիւն» կամ զարթեցրել է նա ուսանողների մէջ որևէ «ընդհանուր իդէալներ»: Որքան մեզ թւում է, այդ տեսակէտից դեռ մեծ արդիւնքներ չեն երևում, գուցէ և աւելին սպասել անկարելի կըլինէր. իրաւ, ինչ կարելի է պահանջել երեք տարւայ ընթացքում կայացած երեք Համագումարներից: (Պիտի նաև նկատել, որ ոչ մի ժամանակ Համաժողովները չեն ունենում այն նշանակութիւնը, որը ցանկանում են նրանց տալ. ահագին դժարութիւններով գլուխ է բերւում մի որևէ բժշկական Համաժողով, որևէ Բերլին կամ Պետերբուրգ քաղաքում, և ամենքը խօստովանւում են, որ ստացած օգուտը չէ Համապատասխանում մտաւած փողին ժամանակին, ոյժերին և նրանց վրայ ստանձնած յոյսերին):

Միութեան գործունէութիւնը ապարդիւն չէ եղել և նա թողել է նկատելի հետեւանքներ:

Այժմ միայն վերջ ի վերջոյ որոշեց, թէ որքան Հայ ուսանող կայ Յւրոպայում, ինչ են սովորում նրանք և որտեղից են եկած: Պարզեցին զանազան տեղ գոյութիւն ունեցող ուսանողութիւնների

բնորոշ յատկութիւնները, մանաւանդ Պարիզի ուսանողութեան, որը Գերմանիայի Հայ ուսանողների համար կատարեալ terra incognita էր մինչև այդ ժամանակը: Փոխադարձաբար և Պարիզի կամ Փրանսիայի, ուսանողութիւնը ստիպեցաւ դուրս գալ իր նախկին կատարեալ անտարբերութիւնից ու փոքր իշատէ հետաքրքրել մնացած ուսանողներով: Որպէսզի կատարելապէս չըխաչտառակեն, պարիզեցիք իրանց միջից երկու ներկայացուցիչ ուղարկեցին Հէյդելբերգի առաջին համագումարին. բացի այդ երկու անձերից, Պարիզից ինքնաբերաբար ոչ մէկը չէր եկել ոչ այդ, ոչ էլ հետեւեալ տարւայ երկրորդ համագումարին: Այդպիսով Միութեան անդամների յարաբերութեան մէջ, Պարիզի ուսանողութիւնը ամենից թույլ կողմն է ներկայացնում: Ժրնեւի ուսանողութիւնը, բաղկացած լինելով կիսով չափ ուսուսակայ ու տաճկահայ ուսանողներից, միշտ եղել է աւելի հանրածանօթ. բացի դրանից ժրնեցիք ներկայ են եղել համագումարներին աւելի ճոխ թուով, որտեղ և որոշեցին աւելի նկատելի կերպով յատուկ նրանց պատկանող մի քանի կողմերը—ինչպէս բարձր սոցիալական ձգտումներ, աւելի խիստ յարձակումներ մեր ուսանողների և հասարակութեան բուրժուական մասի վրայ, աւելորդ ատելութիւն դէպի ձևականութիւնն ու կարգապահութիւնը, սէր «անվախ» ու «անկեղծ» դուռալ orbis et urbis սեպհական ձգտումների և կարծիքի մասին և այլն, և այլն: Սակայն պիտի շտա-

պենք լիշել ամենանշանաւոր հետեւանքը. երկրորդ համագումարի կարգադրիչ յանձնաժողովը, ենթադրելով, որ Լեմբերգի համալսարանում կարող են մի քանի լեհական Հայ ուսանողներ լինել, ուղարկեց սրանց իր շրջաբերականները, եթէ չենք սխալում, ուղղակի համալսարանի հասցէով: Երկար ժամանակ չանցաւ և յանձնաժողովը ստացաւ այս երիտասարդներից մի երկար ու սրտաուռ նամակ: Ուսանողները ցաւելով, որ չըզիտեն մայրենի լեզուն, յայտնում էին իրանց շնորհակալութիւնը, հրճւանքն ու զարմանքը, որ Եւրոպայի Հայ ուսանողութիւնը «որոնեց» նրանց: Ամենաջերմ ցանկութիւն արտայայտելով մասնակցել Միութեանը, նրանք խնդրում էին, որ Բերլինի Հայ ուսանողներից մէկը գնայ նրանց մօտ և սովորեցնէ հայերէն: Նամակը գրւած էր զերմանական լեզուով, միայն վերջը մեծ-մեծ տառերով գրւած էր հայերէն «Կեցցէ Հայաստան»¹⁸⁾:

¹⁸⁾ Ներկայ տարւայ «Տարազի» 22 համարի «Ելլիւստրասիօնի» մէջ պ. Վանցեանը նկարագրում է իր այցելութիւնը Լեմբերգի հայերին («Այց Լեմբերգի հայերին»): Այդ նկարագրութեան մէջ ամեն ինչ վերին աստիճանի սրտաշարժ է: Եթէ մենք ծանօթ չըլինէինք վերոյիշեալ նամակի բովանդակութեան հետ, կըլժարանայինք հաւատալ այն ցնծութեան, որը պատճառեց մի հայաստանցու այցը լեհահայ շրջանում: Յանկայի կըլինէր, որ այդ լեհահայերի ոգևորութիւնը և հետաքրքրութիւնը հեռաւոր հայրենիքի համար մի որևէ գործնական հետեւանք ստանար:

Եթէ աչքի անցկացնենք Համալսարաններում կարդացած դասախօսութիւնների վերնագիրները, կրտեսնենք, որ դասախօսները միջին թւով ընտրել էին բաւականին յաջող թեմաներ «ընդհանուր իդէալներ զարթեցնելու համար»: Մենք ի նկատի ունենք մանաւանդ իդէալները, որոնցով պիտի ղեկավարեն ուսանողները ապագայում «հայրենի հողի վրայ» գործելիս: Պարզ է, որ համագումարները «ընդհանուր» իդէալներ զարթեցնելու համար չեն, ոչ էլ պիտի լինեն: Ընդհանուր իդէալներ քաղում է երիտասարդը Համալսարանից, զրադարաններից, պարբերական մամուլից. մի խօսքով՝ այդ իդէալները ձեռք են բերում ամբողջ իր ուսման ընթացքում: Համագումարները պէտք է ունենան մասնաւոր նշանակութիւն, նրանք պիտի մշակեն մասնաւոր իդէալներ: Այդ տեսակէտից, շատ ցաւալի է, որ ուսանող Ա.-ի կողմից արած առաջարկութիւնը այսպէս ձևակերպել Միութեան նպատակը՝ «կազմել իդէալներ մեր հայրենի հողի վրայ գործելու համար» — չանցաւ և սրա փոխարէն մտաւ կանոնադրութեան հետեւեալ ձևը. «ընդհանուր իդէալներ զարթեցնել ուսանողութեան մէջ»: Ուսանողը զալով համագումարը, պարտաւոր է որոշ չափով արդէն պատրաստի ընդհանուր իդէալներ ունենալու. նա գնում է համաժողովը այդ ընդհանուր իդէալները մեր հայկական, սեղանական կեանքին յարմարեցնելու համար: Այդ է ամենադժուարը և դրանում պիտի կայանայ համագո-

մարի բարձր դերը. այդ մտքով Եւրոպայի հայ ուսանողութեան համաժողովները կարող են մինչև անգամ պատմական դառնալ, եթէ յաջողւի նրանց ժամանակի ընթացքում մեր կեանքին յարմարեցրած որոշ գաղափարներ մշակել: Թէպէտ և ուսանող Ա.-ի լիշեալ առաջարկութիւնը չ'անցաւ, այնուամենայնիւ երևում է, որ Միութիւնը բնագոյրէն զգում է, ինչում պիտի կայանայ նրա նշանակութիւնը. դա ապացուցանում է կանոնադրութեան ՚ կէտով, որտեղ ասւած է. «Իստախօսութեան նիւթ կարող են լինել միայն այն նիւթերը, որոնք որևէ առընչութիւն ունեն Հայկական կեանքի հետ»¹⁹⁾:

Մնում է ցանկալ, որ այս կէտը միշտ գործադրւի ամենախիստ կերպով: Մեր կարծիքով, Միութիւնը, իր նպատակին հասնելու համար պիտի լինւի գլխաւորապէս Հայկական նիւթի դասախօսութիւնների վրայ. այդպիսի մի ՚ կամ Ց լուրջ մտածւած ու յաւ մշակւած դասախօսութիւններ աւելի կը զրա-

¹⁹⁾ Ան առաջին երկու համագումարների դասախօսութիւնների վերնագիրները. «Ազգայնութեան մասին ընդհանրապէս և ազգայնութիւնը մեր մէջ մասնաւորապէս»: «Հայրենի նւագայնութեան ու կոկոթեան մասին»: «Հասարակական պատասխանատուութիւնը անհատական հիւանդութիւնների դէպքում»: «Պատմութիւն ու պատմական ուղղութիւնները նոր ժամանակներում և մի համառօտ տեսութիւն հայկական պատմագրութեան մասին»: «Հայ համալսարանական կոչման մասին»: «Տաճկաստանի հայ երիտասարդութեան մասին»:

ւեն ուսանողներին դէպի համաժողովը, աւելի կը-
նպաստեն «բարոյական ու մտաւոր հաղորդակցու-
թեանը» ու իդէալների մշակմանը «հայրենական
հողի վրայ գործելու համար», քան եղել է այդ մին-
չև այժմ: Ուսանողը պիտի յոյս ունենայ լսելու այդ-
տեղ դասախօսութիւններ այնպիսի առարկաների մա-
սին, որոնց մասին նա իր նստած քաղաքի համալ-
սարանում ու գրագարանում կարող է ոչ լսել, ոչ էլ
կարդալ. նթէ ոչ, արժէ միթէ մի հարիւր մարկ
ծախսել, հարիւրաւոր կիլոմետր անել մի ուսանողի
րեֆերատը լսելու համար. օրինակ «Գոյութեան կրո-
ւի և բարոյականութեան մասին»: Նոյնը կարելի է
պահանջել և տեղական ուս. ընկերութիւնների ժո-
ղովներից, և ահա թէ ինչու:

Պէտք է միշտ աչքի առաջ ունենալ, որ ժո-
ղովները ուսանողական թանգ ժամանակից խլած
ժամերն են կազմում, ուստի և հարկաւոր է գործա-
դրել այդ ժամանակը ամենաօգտակար կերպով: Հարց-
նենք, թէ ինչն է ստիպում ուսանողին ժողովը այ-
ցելել, որը յաճախ տեղի է ունենում կանոնաւորա-
պէս ամսական երկու կամ չորս անգամ: Ի՞նչ է ըս-
պասում նա այդ ժողովից: Երևի սրանք են նրա
սպասելիքները. ա. ընկերներին հանդիպել, բ. խոր-
հրդակցել ընկերական գործերի մասին, գ. հետաքը-
քիր րեֆերատ լսել ու դ. հետևել րեֆերատի առի-
թով յաջող վիճաբանութիւններին: Ամենաուժեղը,
անշուշտ, վերջին երկու ձգտումներն են, յետոյ գա-

լիս է երկրորդը²⁰⁾, իսկ առաջինը իսկապէս առան-
ձին նշանակութիւն չունի, որովհետև ընկերներին
պատահել ու նրանց հետ ժամանակ անցկացնել, ու-
սանողը կարող է ամենայն տեղ ոչ աւելի վատ, քան
ժողովներում: Ուրեմն, կենդրոնական տեղը բռնում
է րեֆերատը: Ով որ ծանօթ է եւրոպական կեանքի
հետ՝ կըհամաձայնի, որ այդ դասախօսութիւնը պի-
տի չափազանց հետաքրքիր լինի, որպէսզի մեր ու-
սանողը ուրախութեամբ նւիրէ ուսանողական ան-
վերջ ժողովին իր հրեկոյեան ժամերը, որը նա կա-
րող կըլինէր անցկացնել շատ տարբեր կերպով²¹⁾:
Անհրաժեշտ է, ուրեմն, որ րեֆերենտները չըլսօսեն
այդտեղ ընդհանուր գաղափարներից ու հայութեան
հետ ոչ մի կապ չունեցող առարկաներից. դրանց
հետ ծանօթ է մեր ուսանողը կամ պիտի ծանօթա-
նայ անմիջապէս աւելի հեղինակաւոր աղբիւրներից,

²⁰⁾ Այդպիսի գործեր գրեթէ չեն լինում:

²¹⁾ Զարմանալի է, թէ այնուամենայնիւ, որ քան գո-
վելի հաճոցքով են այցելում ուսանողները իրանց ժողով-
ներին: Մեծամասնութիւնը միշտ ներկայ է լինում, և այդ
լինում է շաբաթ երեկոյեան, երբ ամեն մի մարդ ձգտում
է ազատ անցկացնել իր ժամանակը: Հարկաւոր էր տես-
նել, թէ ինչպէս անցած տարւայ չուլիս ամսուայ վերջին,
(երբ արձակուրդները արդէն սկսել էին), մի սարսափելի
տաք օր, փոքր սենեակում կիտած լսում էին Ռերլինի
հայ ուսանողները իրանց ընկերոջ րեֆերատը. «Անհատա-
կանութիւնը ըստ Իբսէնի գրուածքների» (այսպէս էր վեր-
նագիրը, եթէ չեմ սխալում):

քան է իր հայրենակից ընկերը: Կարող են ընդդիմախօսել, որ ընդհանուր հարցին վերաբերող ընթերատները շատ նպատատաւոր են ինչպէս դասախօսի, այնպէս և ունկնդիրների մտաւոր զարգացման համար, որովհետև միայն այդ միջոցովն է հնարաւոր մարտել կարգացածն ու լսածը: Այս նկատողութիւնը, ընդհանրապէս վերցրած շատ ճիշտ է, իսկ յարաբերութեամբ, այսինքն յարմարեցրած ներկայ դրութեանը, նա զրկուած է իր առաջնակարգ նշանակութիւնից: Եթէ այն պատճառաբանութեան, որը բերինք պաշտպանելով հայկական թեմաները, աւելացնենք նաև այն տխուր երևոյթը, որ մեր երիտասարդները համալսարան աւարտելով մի զարմանալի արագութեամբ կորցնում են ամբողջ հետաքրքրութիւնը դէպի գրականութիւնն առհասարակ և մանաւանդ դէպի հայկական գրականութիւնը, մամուլը, հասարակային հարցերը և այլն. եթէ ի նկատի ունենանք նաև այն, որ ոչ մի բան այնպէս չէ օգնում ընդհանուր զաղափարների մարտելուն, ինչպէս փորձը— յարմարեցնել ընդհանուր զաղափարները որոշ, զրական կեանքին. վերջապէս, եթէ չբնութանք, որ միշտ կարելի է ընդհանուր բովանդակութեան ընթերատներից հանել որոշ եզրակացութիւններ հայկական կեանքի վերաբերմամբ, կամ ընդհակառակը հայկական ուսումնասիրութիւնը ընդհանրացնել մի որևէ ընդհանուր զաղափարով,— այն ժամանակ չենք դժուարանալ ցանկալու, որ ուսանողա-

կան դասախօսութիւնների համար ընտրեն միմիայն հայկական թեմաներ: Ասում են և այն, որ ուսանողները, բաւականաչափ ծանօթ չլինելով հայկական կեանքի հետ և չունենալով իրանց հետ որոշ գրականական նիւթ, ոչ մի կերպ չեն կարող հայկական դասախօսութիւններ կազմել: Պա ճիշտ է, բայց ոչ ամբողջապէս: Ըստ «Տեղեկագրի», 1897—1899 տ. ընթացքում, Քերմանիայի բոլոր ուսանողութիւնների ժողովներում (Խերլին, Լէյպցիգ և Ցիւրիխ) կարգացել են 52 դասախօսութիւն, որոնցից հայկական նիւթի մասին եղել են տասնեմէկը: Ի հարկէ, դա շատ չէ, սակայն ապացոյց է, որ անկարելի բան չէ մեր պահանջը. չիշենք, որ Քերմանիայում ուսանող բոլոր հայ երիտասարդներից, $\frac{1}{3}$ մասը եկած է Քէորգեան ու Ներսիսեան դպրոցներից, իսկ սրանք արդէն բաւականաչափ պիտի ծանօթ լինեն հայոց գրականութեան, պատմութեան և առհասարակ հայկական կեանքի հետ: Մեր խօսքը գլխաւորապէս դասախօսութիւնների մասին չէ, այլ հրապարակախօսական, իսկ այսպիսիների համար մեր ուսանողութեան մեծագոյն մասի հայկական գիտելիքները կարող են բաւարար համարել. չէ որ նրանք անդադար վիճում են իրար հետ, երբ խօսք է գալիս մեր հասարակական-ազգային կեանքին վերաբերող որևէ հարց. ինչո՞ւ ուրեմն չբխորձել, պարզել նոյն մտքերը ուսանողական ժողովում ենթարկելով նրանց որոշ սխախտի: Կրկնում ենք, որ անհրա-

ժեշտ է օգտել ուսանողական տարիներից, երբ հասարակական հետաքրքրութիւնը ուժեղ է, երբ հնարաւոր է լուսաբանել մեր կեանքի համար մի քանի նշանաւոր հարցեր, մատնանիշ անել մի շարք պահանջների վրայ, հասկանալ իրար ու միասին մշակել որոշ հայեացքներ. հարկաւոր է օգտել, որովհետեւ շատերի համար ուսանողական շրջանը վերջին ասպարէզն է այդ տեսակ հետաքրքրութեան համար:

Վերադառնալով նորից «Եւրոպական Հայ Ուս. Միութեանը» և նրա նպատակին — բարոյական ու մտաւոր հաղորդակցութեան մէջ դնել Հայ ուսանողական խմբերն ու ուսանողները, կրնկատենք, որ կայ էլի մի միջոց այդ գեղեցիկ նպատակին հասնելու համար: Դա է — տպագրել համագումարներում կարգացած այն ընթերատները, որոնք ժողովի կողմից տպագրութեան արժանի կը համարեն: Այդ տեսակէտից ի հարկէ շատ լաւ կը լինէր ունենալ Միութեան օրգան, կամ գուցէ հրատարակել ժամանակ առ ժամանակ Միութեան կողմից այդպիսի ընթերատներից բաղկացած ժողովածուներ. սակայն այդպիսի ձեռնարկութիւնները ծանր պիտի լինին ուսանողների համար, ուստի նախապես է այդ դասախօսութիւնները զետեղել գոյութիւն ունեցող հայկական լրագրների ու ամսագրների մէջ: Անտարակոյս, իւրաքանչիւր ուսանող իրաւունք ունի տպագրել իր հեղինակութիւնը առանց որեւէ համաժողովի համաձայնութեան, բայց անվիճելի է և այն, որ համա-

գումարից ընտրած յօդաճն աւելի վառ կը պահէ միութեան զիտակցութիւնը, կը ստիպի հեղինակներին աւելի լրջօրէն ու բարեխիղճ կերպով վերաբերել զէպի իրանց պատրաստելի ընթերատները, աւելի կը նպաստի որ համագումարները բազմանդամ լինեն, որովհետեւ բացի լոկ հետաքրքրութիւնից, ամեն մէկը կը ձգտի որպէս Միութեան անդամ մասնակցել ընթերատի զնահատութեան գործում: Արդէն չենք ասում որ այդպիսի յօդաճը աւելի մեծ արժէք կ'ունենայ թերթի խմբագրութեան ու հասարակութեան աչքում:

Նոյնը կարելի է ասել և տեղական ուս. ընկերութիւնների ժողովներում կարգացած դասախօսութիւնների մասին ²²⁾:

²²⁾ Ուսանողներից մի քանիսը հրատարակել են իրանց ընթերատները հայկական ու օտար թերթերում: Օրինակ, Գ. Վանցեանի՝ «Հայրենի նւագայնութեան ու կուլութեան մասին», կարգացած Միութեան առաջին համաժողովում, լոյս է տեսել Մուրհ-ի (1898 թ. (?) մէջ. Աշոտ Տէր-Պօղոսեանի՝ «Հոգեպաշտութիւնը և նրա մնացորդները մեզանում, կարգացած «Յերիւնի հայ ուս. ընկ. գրակ. ընկերութեան» ժողովում 1898/99 ձմերնային սեմեստրին, տպագրւեց Մուրհ-ում (1900 թ. №№ 1 և 2), Գէորգ Մելիք-Վարդեօգեանի՝ «Գերմանիայի բաղաբանութիւնը Տաճկաստանում», կարգացած նոյն ընկերութեան ժողովում 1899 թ. ամարնային սեմեստրին (Տեղեկագրում այս ընթերատը չէ յիշւած), տպւեց թարգմանութեամբ «Новое Общество» 1899 թ. յուլիս և օգոստոսի մի քանի համարներում: Գ. Մելիք-Վարդեօգեանի՝

VIII

Անշուշտ, Հետաքրքիր է, թէ որն է մեր գերման ուսանողի մտաւոր զարգացման աստիճանը, այն միջոցին, երբ նա գալիս է Համալսարանը, թէ այն, երբ նա աւարտում է ուսումը կամ կատարելագէտ ջաւարտելով վերագառնում է Հայրենիք: Հետաքրքիր է նոյնպէս, թէ որչափ նշանաւոր են նրա մասնագիտական գիտելիները, երբ նա վերջացնում է ուսումը, որոնք են նրա մտաւոր ձգտումները, բարոյական սկզբունքները, սովորութիւններն ու կենցաղավարութիւնը: Այս կէտերը կը շոշափենք մենք ամենաւերջահասուր խօսքերով:

Յաճախ հարց է արժարձել թէ Հայ ուսանողութիւններից որն է աւելի զարգացածը, Ռուսիայինը, թէ Եւրոպայինը: A posteriori օտ դժւար լուծելի հարց է, իսկ a priori նրանց կարելի է ասել Հետեւելը. «Եթէ մեր ուսանողութեան այդ երկու մասերից վերջնենք Համալսարան դեռ նոր մտնողներին, այն ժամանակ ուսական մասը պիտի երևի աւելի բարձր համարելի, որովհետեւ եւրոպական մասում ի թիւս այլոց գտնուում են միջնակարգ դպրոց:

«Գերմանական օգնութեան ընկերութիւնները Տաճկահայաստանի համար» կարգ. «Պարիզի Հայ Ռ. Միութեան» ժողովում (1899 թ.), տպագրւեց Մուրճ-ի մէջ (1899 թ. № 1 և 1900 թ. №№ 1, 2, 3, 4): Նոյնը հրատարակւեց նաև անանձին գրքոյկով:

ջաւարտածները, ընդհանրապէս վեցերորդ դասարանի վկայականով, ինչպէս և երիտասարդներ մեր թեմական դպրոցների վկայականներով (վերջինները շնորհիւ դպրոցի և այն միջավայրի, որտեղ նրանք շրջում են. ընդհանրապէս, հազիւ թէ կարողանան Հաւասարել ուստական որևէ միջնակարգ դպրոցում աւարտածի հետ): Իսկ ինչ վերաբերում է յաջորդ տարիներին, կամ այն միջոցին, երբ ուսանողները աւարտում են ուսումը, եւրոպական Հայ ուսանողները անտարակոյտ Հաւասարում են իրանց ուսական Հայրենակիցներին. մեզ թւում է, որ նրանք մինչև անգամ աւելի առաջ են անցնում: Եւ դա ամենևին զարմանալի չէ. նոր երկիրը, շուրջը եռուն Հասարակական-քաղաքական կեանքն ու գիտնական յառաջադիմութիւնը պէտք է որ ուժեղ ազդեն մտաւոր զարգացման վրայ:

Դժւար է նոյնպէս Համեմատել այդ ուսանողների մասնագիտական գիտելիքների պաշարը, երբ նրանք ուսումը աւարտած վերագառնում են տուն: Այստեղ հաշիւ պիտի առնել մեր Հասարակութեան մէջ ու ամբողջ Ռուսիայում այն տարածւած կարծիքը, որ իբր թէ գերմանական Համալսարան աւարտելը չնչին մի գործ է, որ զիպլոմներն ալլտեղ կարելի է փողով գնել և այլն, և այլն, մինչդեռ իսկապէս աւելի դժւար է աւարտել գերմանական Համալսարանը և մանաւանդ պոլիտեխնիկական քան նոյն դպրոցները Ռուսիայում: Այդ պատճառով, կար-

ծում ենք, որ Գերմանիայում աւարտածները աւելի հմուտ են իրանց մասնագիտութեան մէջ, քան ուսանողները:

Գերմանիայում աւարտողների ամենամեծ տոկոսը լինում է այն ուսանողների թւում, որոնք ուսումնառիրում են գործնական մասնագիտութիւններ, ինչպէս բժշկութիւն, մեքենայագիտութիւն, քիմիա և այլն, և որոնք այդ մասնագիտութեան վրայ նայում են որպէս փող վաստակելու միակ աղբիւրի վրայ ապադայում: Սրանից լետոյ դալիս են փիլիսոփայական ֆակուլտետի ²³⁾ այն ուսանողները, որոնք նոյն աչքով են նայում իրանց ընտրած մասնաճիւղի վրայ, իսկ վերջին տեղը բռնում են փիլիսոփայական ֆակուլտետի նիւթապէս ապահովները: Ահա այն պատճառները, որով այս ֆակուլտետը քիչ աւարտողներ է տալիս մեր ուսանողներին թւից: Առաջինը, որովհետև այդ ֆակուլտետը մտնում են մեծ մասով նիւթապէս ապահովները և ուրեմն սրանց համար վերջացնելը կարող է առաջնակարգ հոգսերից մէկը չըլինել: Երկրորդը — ապագայ գործունէութեան անպարզութիւնն է, ուսանողը չէ

²³⁾ Գերմանիայում Փիլիսոփայական ֆակուլտետի մէջ տնում են. գուշտ փիլիսոփայութիւնը իր մասերով, գրամկանութիւնը, պատմութիւնը, հասարակական գիտութիւնները և մինչև անգամ բնագիտութիւնը: Այս ֆակուլտետի բոլոր ճիւղերը (բացի քիմիականից) փող վաստակելու տեսակէտից, ի հարկէ, շատ անաջող են:

կարող սրջակի կերպով առել, թէ ինչպէս է դործադրելու հայրենիքում իր ուսած պատմութիւնը, դրականութիւնը կամ հասարակային գիտութիւնները և ի հարկէ ճրագրի այդ անպարզութիւնը աղքատ է իր եռանդի վրայ: Երրորդ պատճառը փրնտրելու է այն հանգամանքի մէջ, որ այս ֆակուլտետով զրաւում են այն երիտասարդները, որոնց մրտածողութեան դիտար յատկութիւնը ընդհանրացումներ կազմելն է: Մտածողութեան հէնց այդ եղանակի պատճառով դժար է լինում բաւականաչքնորած մասնագիտութեան սահմաններով: Ընդհանուր գիտութեան ամեն մի մասնաճիւղը, ամեն մի բանը հաւասարապէս հետաքրքիր է նրա համար իր ներքին, փիլիսոփայական նշանակութեամբ: Երրորդ պատճառն այն է, որ այդ ֆակուլտետը ընտրողները արդէն իրանց բնատրութեամբ չեն չափշտակում կեանքի նիւթական կողմով. ուրեմն և դիպումը նրանց համար նշանակութիւն չունի, եթէ նրանք զգում են, որ կարող են վերադառնալ տուն առանց դիպումի, բաւականանալով իրանց գիտելիքների և զարգացման պաշարով: Հինգերորդ պատճառը — մեր հասարակութեան վերաբերութիւնն է դէպի փիլիսոփայական ֆակուլտետի ուսանողները: Մենք չենք խօսում այստեղ հասարակութեան այն շրջանի մասին, անդրադէտ ու անկիրթ, որը բըժշկական ու մանաւանդ ճարտարագիտական ֆակուլտետից դուրս ոչինչ չէ ընդունում. ո՛չ, իսոնքը այստեղից գոյարմարտու մայ միբրս նուար առնել

տեղ այն «ինտելիգենտները» մասին է, որոնք իբր թէ լաւ են Հասկանում գիտութեան, գրականութեան ու հրապարակախօսութեան նշանակութիւնը ազգիս յառաջադիմութեան համար, որոնք մինչև անգամ օրինակ բերելով եւրոպացիներին, ողբում են յաճախ հետևեալ շարքով. «էհ, որքան փուճ ազգ ենք մենք, ոչինչով չենք հետաքրքրոււմ, ոչինչ, չենք սիրում, չ'ունենք ոչ սեպհական գիտութիւն, ոչ գրականութիւն, չ'ունենք շնորհքով լրագիր կարգալու: Եւրոպացիք, հազար վերստ անելով գալիս են մեզ մօտ ուսումնասիրելու այն, ինչ որ մեր քթի տակն է, որի գոյութիւնը չբնութենք, ոչ էլ կըհետաքրքրենք, եթէ իմանանք»: Եւ երբ այս տեսակ «ազգային ողբացողը» պատահում է արտասահմանում կամ կովկասում փիլիսոփայական ֆակուլտետի որևէ մասնաճիւղի հայ ուսանողին, նա յարձակոււմ է սրա վրայ իր «գրական աշխարհահայեացքի» ամբողջ ծանրութեամբ, մատնանիշ անելով այս ինչ ինժինների կամ այն ինչ բժշկի վրայ, որոնք ամենակարճ միջոցում «ամենահրաշալի պաշտօններ» են ստացել, և եթէ մի կերպ յաջողոււմ է այս «գրական» մարդուն համոզել, որ մտաւոր սրնունդը նոյն չափով է անհրաժեշտ հասարակութեանը, որքան և բժիշկների գոյութիւնը և որ տաղանդաւոր հրապարակախօսները, գիտնականներն ու բանաստեղծները աւելի փոքր ծառայութիւն չեն մատուցանում ազգին քան տաղանդաւոր քիմիկոս-

ները, և որ մեր գրականութիւնն ու գիտութիւնը չեն կարող յառաջադիմել, եթէ չըլինեն մարդիկ, որոնք մասնաւորապէս ներքին այդ գործին, այն ժամանակ նա փոքրիկ ինչ զիջանում է, բայց այնուամենայնիւ խնդրում է որ «շուտով վերադառնաք տուն, որովհետև ախօս է ժամանակ կորցնել», մինչդեռ գործնական մասնագիտութիւնների ուսանողներին՝ սիրում է նա անդադար կրկնել իր աֆորիզմը (որով հպարտ է) լուրջ ու փորձառու դէմքով. «մենք, հայերս, միշտ շտապում ենք, մեծ կարծիքի ենք մեր մասին և կամենում ենք ոչինչից բան շինել. միք շտապիլ, ասում եմ ձեզ, միք շտապիլ. վերջացնելուց յետոյ հարկ չըկայ իսկոյն վերադառնալու, էլի աշխատեցէք, էլի սովորեցէք և յետոյ եկէք»: Սրա հակառակ, ահա թէ ինչ է լլսում ամենայն օր ոչ «գրական» ուսանողը իր ծնողներից, ազգականներից, բնկերներից ու հասարակութիւնից. «Տօ, մինչև երբ մնաս այդտեղ, ախր չ'իմացանք, թէ ինչ ես սովորում, բայց ինչ էլ որ լինի, բաւական է, վերադարձիր ի սէրն Աստուծոյ»-ու մեր մանկավարժը, պատմագէտը, կամ հասարակագէտը, բոլոր վերը յիշած պատճառներից գրգռած հաւաքելով իր ձամբբուկը, վերադառնում է տուն...

Հարկաւոր է սակայն խոստովանել, որ մեր երիտասարդներն էլ մեղք ունին այն երևոյթի մէջ, որ փիլիսոփայական ֆակուլտետը ²⁴⁾ այդչափ վաղը

²⁴⁾ Թէ ինչ ճիւղեր է պարունակում այդ ֆակուլ-

է ընկել մեր հասարակութեան աչքում: Նա վաչր է ընկել առհասարակ ամեն տեղ շնորհիւ ժամանակակից նիւթապաշտ ոգուն, իսկ մեզ մօտ յատկապէս: Պա բացատրելի է երևի նրանով, որ վերջին ժամանակները այդ ֆակուլտետը չըտեսց մեզ ոչ մի աչքի ընկնող հասարակական—գրական գործիչ, չընայած, որ այդ տեսակ ուսանողները թիւը այժմ անհամեմատ աւելի մեծ է, քան եղել է որևէ ուրիշ ժամանակ: Անհրաժեշտ է ուրեմն, որ այդ երկտասարկները առանց շեղելու իրանց ընտրած ճանապարհից, հասնեն ցանկացած նպատակին և տան առատ գործունէութեան մի քանի օրինակներ գիտական, գրական ու հասարակական ասպարէզներում:

Ուսանողների փոխադարձ յարաբերութիւնը, ճաշակներն ու ձգտումները ինչպէս և ամբողջ կենցաղավարութիւնը՝ ապացուցանում են, որ նրանք տողորած են ազնիւ ու կուրտուրական ձգտումներով: Կան ի հարկէ, տխուր բացառութիւններ, բայց սրանց թիւը համեմատաբար շատ փոքր է:

Մեծամասնութիւնը սիրում է հետևել զանազան նորութիւններին մտաւոր ու գեղարեւոտական աշխարհից. աւելորդ է ասել ի հարկէ, որ այդ յաջողում է անել ամենաընդհանուր կերպով, որքան թույլ են տալիս ազատ ժամերը, իսկ ինչ վերաբերում է գեղեցիկ գրականութեանը, այդ տեսակի մինչև տետր, տես նախորդ ծանօթութիւնը:

անգամ ամենանշանաւոր նորութիւնները կարգացում են շատ սակաւ անգամ: Ժամանակի սղութիւնը թույլ է տալիս ծանօթանալ նրանց բովանդակութեան հետ միայն քննադատական յօդածներէրից: Աւելի մեծ ուշադրութիւն է տրուում գրական նորութիւններին փրկիտփայտական—հատարակական բովանդակութեամբ. զա բացատրելի է գլխաւորապէս առհասարակ ժամանակակից ոգով:

Ուսանողները յաճախում են թատրոն, լուրջ երաժշտական կոնցերտներն ու նկարչական ցուցահանդէսները, և հարկաւոր է մատնանիշ անել, որ այդ անում է այն չափով, որքան պատշաճ է մի ուսանողին: Գովելի է նաև, որ կաֆէ-շանտանները ու նմանօրինակ տեղերը այցելում են մեր ուսանողները թիւնից աւելի քիչ (գրեթէ երբէք), քան որևէ մի ուրիշ ուսանողութիւնից Գերմանիայում. մերոնք գերազատում են կաֆէները, որտեղ ստացւում են անթիւ թերթեր և որտեղ կարելի է հանդիպել ընկերներին: Այդ անմեղ սովորութիւնը ամենևին վնասակար երևոյթ չէ և նա յօսուել է ամբողջ Եւրոպայի ինտելլիգենտ դասակարգին: Չգտումները լրջութիւնը արտայայտում է նոյնպէս և գլխաւոր ընտրութեան, խօսակցութեան առարկաների ու փոխադարձ յարաբերութեան մէջ:

Այդ յարաբերութիւնները բաւականացուցիչ լինելով, ընականաբար, երբեմն իրանգարում են, բայց աչքի ընկնող հանգամանքն այն է, որ դա սրտա-

հում է ոչ միշտ անձնական պատճառներով, այլ ի թիւս այլոց, յաճախ և գաղափարական ու բարոյական²⁵⁾: Այդ տեսակէտից ողորմելի տպաւորութիւն են թողնում Պարբի հայ ուսանողները. սրանք չըզիտեն պարզ ու ուժեղ զայլոյթով պախարակել ոչ իրանց անառակ ընկերակիցներին, ոչ անամօթ մուրացկաններին, որոնք շողրքորկութիւններով ու խաբեբալութեամբ ամենքից փող են պլոկում, ծախսելով այդ փողը այնպիսի բաների վրայ, որոնք ոչ մի կապ չունեն ուսման հետ) ոչ այն զղւելի ետառներին, որոնք ընկղմելով իրանց մասնագիտութեան մէջ՝ հեռու են պահում իրանց հայ ուսանողներից, բոլոր ուսանողական ձգտումներից ու նախաձեռնութիւններից, ու առհասարակ հայութիւնից. (են պատահել եմ մինչև անգամ այնպիսիներին, որոնք հեռուից նկատելով մի որևէ հայի, անմիջապէս ըսկրում են խօսել իրանց խօսակցի հետ տաճկերէն): Յաւալի է, որ Պարբիում այս տեսակ տիպերը չեն արհամարհում ու դատապարտում բացարձակօրէն. այնպիսի բաներ, որ ամեն տեղ պախարակելի են համարում, այստեղ անցնում են գրեթէ առանց բողոք յառաջ բերելու և ընդհակառակն անձնական

²⁵⁾ Յանկայի է, որ մեր ուսանողները, և յատկապէս Գերմանիայի ու Զւէցարիայի, աւելի պարզ կերպով գանձաւան են գաղափարական սկզբունքները բարոյականից: Յաւում ենք, որ այդ երկու տարբեր բաները յաճախ խառնուում են:

մանր-մունր հաշիւները, և մանաւանդ նախանձր տեղի են տալիս անվերջ զրպարտութիւնների, ոտնձգութիւնների ու կռիւների:

Առհասարակ Գերմանիայի հայ ուսանողութիւնը տարբերում է ուրիշ հայ ուսանողութիւններից իր գերադասելի կողմերով: Չատ հաւանական է, որ օրինակ ժընևում աւելի կարելի է գտնել անհատներ, որոնք ներշնչած լինին աւելի բարձր ու ետագուրկ ձգտումներով, քան Գերմանիայում, սակայն Գերմանիայի հայ ուսանողները, ընդհանրապէս վերցրած՝ գերազանցում են նրանց և մնացած ուսանողութիւնները մարդկային զգացմունքների ու քաղաքացիական յատկութիւնների աւելի ներդաշնակ զարգացմամբ: Ղնորհիւ 60)-ական թ. ռուսաց գաղթականութեան ազդեցութեան, դեռ չէ Զւէցարիայի ռուսահայկական շրջաններում վերացել այդ պատմական տարիներին յատուկ հերքող ոգին, և մեզ թւում է որ հարկաւոր է վերադրել այդ գաղթականութեան ինչպէս և ընդհանրապէս Զւէցարիայի ազատ-արձակ կեանքին, այն հանգամանքը, որ այլտեղի հայ ուսանողների մէջ աւելի շատ կարելի է պատահել, թէ երիտասարդների և թէ օրիորդների չափազանց բարձր ոգևորութիւնը (exaltation) հեռուոր իրէալների համար և չափազանց խիստ վերաբերումը դէպի գոյութիւն ունեցող կարգ ու կանոնը, քան որևէ ուրիշ տեղ: Այդ տեսակ անձնաւորութիւնների ներկայութիւնը միշտ ճնշելի կերպով է ազդում շրջապատողների վրայ, խանգարելով

որանց կեանքի առողջ հրապուրները անմիջապէս վա-
 չեկելու. ամեն մի զարձութիւն, որը զուրկ է մտա-
 ւոր ու գիտակցական նպատակից, վտանգի է են-
 թարկում, պախարակած լինել նրանց կողմից, որ-
 պէս «բուրժուազիական» մի ձգտում կամ «բնագր»:
 Չափազանց բծախնդիր լինելով՝ սրանք յաճախ պատ-
 րաստ են ձեր մի որևէ է պատահական դատողու-
 թիւնից կամ խօսքից անխնայ ու վերջնական կար-
 ծիք կազմել ձեր մասին: Այդպիսի տիպերը վերա-
 նում են նոյն իսկ Զէյցարիայում, իսկ Գերմանիա-
 յում նրանք վաղուց գոյութիւն չունեն. այստեղ, այ-
 սինքն, Գերմ. հայ ուսանողութեան մէջ պատաստ-
 ւում են առողջ ու ազնիւ ձգտումներ, որոնց կա-
 րելի է ամփոփել հետևեալ խօսքերով. «աշխատել,
 կուել ու վայելել կեանքի հրապուրները»: Անշուշտ
 այդ ուսանողութեան վրայ մեծ ազդեցութիւն է ա-
 նում գերմանացիների ու գերմ. ցեղին պատկանող
 օտարազգիների, ինչպէս անգլիացիք, ամերիկացիք
 և ուրիշների օրինակը, որոնց ոչ հասակը, ոչ էլ
 դիրքը չեն արգելում երբ աւելի է լինում զարճա-
 նալ ի սրտէ ու մինչև անգամ ամենամիամիտ կեր-
 պով: Պարիզի հայ ուսանողները գտնուում են բոլո-
 րովին հակադրական հանգամանքների մէջ: Արտա-
 կուլտուրական ազդին պատկանելով և դեռ հայրե-
 նիքում կրելով տաճկական ու Ֆրանսիական ազդե-
 ցութիւնը, դրանք գալիս են Ֆրանսիա, և գլխաւո-
 րապէս Պարիզ, արդէն որպէս անհաւասարակշիւ բը-

նաւորութեան տէր մարդիկ և այստեղ մեծ ազդե-
 ցութիւն է անում նրանց վրայ պարիզցիներէրնա-
 ւորութիւնը, որի թեթևութիւնն անհերքելի է, որը
 չըզլտէ բնագորէն ձգտել դէպի առողջ զարճու-
 թիւնները, այլ փնտրում է ամենից առաջ զար-
 հութիւնն առհասարակ: Այ մի ցեղի համար այնքան
 բնորոշ չէ հօգեկան կեանքի հաւասարակշիւ-
 թիւնը, որքան գերմանական, և ինձ թւում է որ
 ոչ մի միջավայր չէ կարող աւելի դատարակիչ
 հանդիսանալ մեր արևելեան անկարգ բնաւորութեան
 համար, որքան գերմանականը: Ռոմանական միջա-
 վայրը շատ թույլ ու ներդամիտ դատարակիչ է
 մեզ համար: Ռոմանական ցեղը չափազանց հարուստ
 է տիպերով, որոնց մէջ անհատական ու սոցիալա-
 կան բնագոյները, ինչպէս և ձգտումներ ու դանա-
 զան պարտաւորութիւնները չեն պահպանում պատ-
 շաճաւոր հետևողութիւն ըստ իրանց կարևորու-
 թեան: Ռոմանական ցեղի, օրինակ, Ֆրանսիական
 ազգի, բնաւորութիւնն ու այդ ազգի ամբողջ ներքին
 կեանքը չափազանց նուրբ ու բարդ է, որպէսդի կա-
 րելի լինէր ապահով լինել, որ մեր անպատրաստ
 երիտասարդը կիւրացնէ այդ կեանքի լաւագոյն մա-
 սը ճիշտ և ոչ աղաւաղեալ կերպով: Գալ Ֆրանսիա
 անցնելով գերմանական կեանքի շկոյան - ահա ան-
 վտանգ և մինչև անգամ շատ օգտաւէտ առաջարկու-
 թիւն: Ուշադրութեան արժանի է յամենայն դէպս,
 որ գերմանական հայ ուսանողութիւնը աճում է ա-

ւելի արագօրէն, քան որևէ մի ուրիշը, և մինչև անգամ, եթէ չեմ սխալուած ի հաշիւ Զւէցարիայի. որքան այժմ ուսանողներ ու ուսանողուհիներ կան Գերմանիա, որոնք եկել են Զւէցարիայից:

Այդ երևուցիւթը մխիթարական է: Ի՞նչու. որովհետև, որքան որ և վիճելի լինեն այս կամ այն եւրոպական ցեղի առաւելութիւնները, անհերքելի ու անվիճելի է յամենայն դէպս գերմանական մտքի հիմնաւորութիւնը: Այն անհամակրելի փոփոխութիւնները, որոնց ենթարկեց գերմանական բնաւորութիւնը վերջին տասնեակ տարիներում շնորհիւ երեւելի պատմական անցքերի և որոնք յաճախ ընդունակ են ուղղակի զզւանք յառաջացնել մարդուս մէջ, չէ տարածել գերմանական մտածողութեան վրայ, որը շարունակում է լինել խոր ու հիմնական: Գաղափարներ ու իդէալները մշակում են Գերմանիայում, ոչ փողոցում ու լրագիրներում, այլ համալսարաններում, ամսագիրներում ու յայնաճառաւ հատորներում, փաստերի հսկայական ինդուկցիայի հիման վրայ: Բոլորովին ճիշտ էր նկատել բարեկամներիցս մէկը որ այն դերը, որը խաղում են Փրանսիա լրագիրներն ու լրագրական հրատարակիւթոսները, բայց Գերմանիան պատկանում է ամսագիրներին, դիտականներին ու համալսարանական պրոֆեսորներին, պատմութեան, զրականութեան, քաղաքատնտեսութեան և ամենից առաջ գուտ փիլիսոփայութեան: Եւ դա բոլորովին ճիշտ է. Անկարելի է, մինչև

անգամ ոչ մի անգամ Փրանսիա եղած չըլինելով, չըզիտնալ Փրանսիական նշանաւոր հրատարակիւթոսները անունները, բայց կարելի է աստ տարի ապրել Գերմանիա, և չ'իմանալ թէ որոնք են այստեղ լրագրութեան նշանաւոր զրագէտները, և ընդհակառակը, այստեղ ամեն մի քայլափոխում կը հանդիպէք Virehov-ի, Wundt-ի, Paulsen-ի, Wagner-ի, Schmoller-ի, Kautzky-ի, և ուրիշ նշանաւոր դիտականների անուններին: Կարելի է դուցէ փոքր ինչ բողոքել գերմանական մտքի չափազանց ծանրութեան ու բարդութեան դէմ, ոակայն մենք, հայերս, ամենևին չը պիտի վախենանք դրանից. մեզ, արևելքի զուակներիս, կ'ազատէ միակողմանութիւնից—մեր զիւրազգայութիւնը:


Մեր ուսանողների թիւը Գերմանիայում չափազանց դեռ չնչին է, որպէսզի կարելի լինէր խօսել նրանց ազդեցութեան մասին մեր կեանքի վրայ: Չընայած որ առաջ այդպիսիների թիւը աւելի նւազ էր, այնուամենայնիւ այն ժամանակները գերմանական ոգու ազդեցութիւնը մեր զրականութեան և մանաւանդ մամուլի վրայ անհամեմատ աւելի ուժեղ էր, և դա եղել է շնորհիւ անհատների. Աբովեան ուսել է Գորպատում, Ստեփ. Նազարեանց ներշնչւած էր գերմ. ոգով, Իր. Արծրաւնի, Աբգ. Յովհաննիսեան, Աւ. Արասիանեան և այլն, գերմանական համալսարանների փիլիսոփայութեան զօքտորներ են: Բացի դրանցից մի շարք նշանաւոր գաղտարակիչներ

սովորել են իրանց մասնագիտութիւնը Գերմանիայում:
 Վերջին տաս տարւայ ընթացքում դերմ. Հայ ուսա-
 նողութիւնը չբուեց ոչ մի փոքր ի շատէ աչքի ընկ-
 նող դրական կամ հասարակական գործիչ: Արդեօք
 Հետեւանք չէ դա այն տխուր երևոյթի, որ Հայկա-
 կան ասպարէզը այժմ աւելի յետին տեղ է բռնում
 քան առաջ: Յանկանք, որ այդ ուսանողութիւնը,
 որը ինչպէս նիւթական, այնպէս միջավայրի տեսակէ-
 տեց ամենայաջող Հանգամանքների մէջ է, չբխու-
 սափի այդ ասպարիզից և կրթողական դեր խա-
 ղայ իր ժողովրդի վրայ ղեկավարելով այն իգէալնե-
 րով, որը նա աշխատում է մշակել «Հայրենի Հողի
 վրայ գործելու համար»:



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]







<< Ազգային գրադարան >>



NL0235703

59. 045